# ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆ

## Երեք պատմվածք

(«Սփյուռքահայ պատմվածք» ժողովածուից, Երևան, 1984, էջ 108-144)

# ԱՅՆ ԳԻՇԵՐ՝ ԵՐԲ ԲՈԼՈՐՍ ԱԼ ՔԻՉ ՄԸ ԳԻՆՈՎ ԷԻՆՔ...

Երբ վերջին բաժակը պարպեցի՝ առավոտը արդեն կբացվեր քաղաքին վրա: Մսկոտ, ուժգույն ու քիչ մը տխուր առավոտ մըն էր, դժվարությամբ ծագող ու երկարատև: Երկարատև ու քիչ մը տխուր էր նաև արևելյան այդ հին երգը ու կարծես պանդուխտ՝ բոլորին պես, որ հոդ էին, գիշերվան այդ ժամուն: Երբ վերջին բաժակը պարպեցի ու այլևս ո՛չ շիշերուն և ո՛չ ալ բաժակներուն մեջ ըմպելիք բան չմնաց՝ դանդաղորեն ելա ոտքի, խաղաղությամբ նայելով ընկերներուս, դրացի մարդոց, որ դեռ կխմեին և անոնց հետ համբուրվող աղջիկներուն, պարպված շիշերուն և սեղանին: Ընկեր մը գլանիկ մը կուզեր վառել ու չէր կրնար: Աշխատավորի իր խոշոր ձեռքը մեղմորեն կդողար ու վառված լուցկիին տմույն ու անզոր բոցը օդին մեջ կտատաներ: Անոր աչքերուն մեջ տարօրինակ հիշատակներու ներկայությունը կար: Հայտնապես սիրտը ելած էր, անորոշ զեղումով և գուրգուրանքով լեցուն ու պատրաստ՝ անձնատվության առաջին հանդիպող մարդուն: Ես կմտածեի, թե վտանգավոր հոգեկան վիճակ է ատիկա, գինովության ազդեցության տակ, երբ մարդ կմոռնա ամեն ատելություն և իր բազուկները կբանա գրկելու համար տիեզերքը՝ անհուն գորովով: Այդ պահերուն մարդ անբացատրելի փափաք մը կզգա՝ սիրտը հին քսակի մը պես պարպելու, կկախվի իր ընկերոջ վրա ու շռայլությամբ ու զարմանալի մանրամասնություններով կպատմե արկածներ իր կյանքեն, հեռավոր կերպով զգալով հանդերձ, որ հաջորդ օրը պիտի հիշե այդ բոլորը ու պիտի զղջա:

Երբ սանդուխներեն վար կիջնեինք՝ բոլորս միասին կխոսեինք և ոչ ոք մյուսները մտիկ կըներ: Անշուշտ բոլորն ալ առավել կամ նվազ գինով էին, բայց բոլորն ալ կուզեին ապացուցանել, թե գինով չեն: Մնաց որ ոչ ոք կարտասաներ այդ բառը, որովհետև բոլորն ալ կզգային անոր ներկայությունը: Գուցե ատոր համար էր, որ ես քիչ մը դառնությամբ ու քիչ մը ժպտելով ըսի՝

— Շանորդի՛ք, բոլորդ ալ գինով եք...

Բոլորն ալ ժխտեցին: Ոմանք արհամարհանքով ըսին, թե երբ ծախսելիք դրամ ունենի՝ կրնայի քանի մը շիշ ապսպրել, իրենք քանի մը շիշ

գինիով գինովցողը չեն: Մեկը բարձրաձայն խնդաց, իսկ ուրիշ մը դեմ-
քը ծամածռեց՝

— Գինո՞վ, ի՞նքը...

Ես՝ գուցե: Հետո բոլորը միասին սկսան խոսիլ: Զանազան զուր բա-
ներ կպատմեին, կանգ առնելով փոքրիկ մանրամասնություններու վրա, հիշելով անհարկի ու շատ աննշան և հարակից բաներ: Իրենց մտածումին մեջ անոնք կանգ կառնեին այդ բոլորին վրա՝ մյուսներուն հասկցընելու համար, թե գինով չեն և թե գինով մարդը երբեք այդքան հըստակությամբ, պայծառատեսությամբ ու հավասարակշռությամբ չի խոսիր: Հետո, իրենցմե մեկը, ճամփուն մեջ հանկարծ կեցավ ու դեմքի շատ լուրջ արտահայտությամբ մը բան մը հիշեցուց ինծի: Ըստ երևույթին մեծ կարևորություն կընծայեր պատասխանիս, անուղղակի կերպով հասկըցնելով, որ գինով չէ: Ծխատուփս հանեցի ու դիտմամբ երկարեցի իրեն առանց հատ մը դուրս քաշելու: Ձեռքը երկարեց և իր երկար ու տրտում մատները կդողային: Կնայեր աչքերուս ու նույն ատեն կխոսեր՝ ծածկելու համար իր շփոթն ու մարմնին քաղցր դողը՝ մինչդեռ իր ձեռքը կտառապեր՝ չկրնալով գլանիկը դուրս քաշել: Առավոտյան զով շունչը կսարսեր անոր ուսը: Ի՛նչ որ կուզեր՝ գլանիկ չէր, հապա մաքուր ու զով անկողին մը, իր ծանր ու շփոթահար գլուխը դներ բարձին վրա ու նընջե՛ր: Հաճոյակատարությամբ գլանիկը վառեցի ու թևս նետեցի ուսին: Խաղաղությամբ կրթնեցավ մարմնիս՝ իր ամբողջ մարմնով, որ կդողար ու ծածկելու համար իր հոգիին խռովքը սկսավ հիշատակներ պատմել, անցյալի բեկորներ, որ զորությամբ կհապաղեին իր հոգիին խորը: Անգըթությամբ հարեցի.

— Երրորդ անգամն է, որ կպատմես, գիտե՛մ, գիտե՛մ այդ բոլորը...

— Չէ՛, շանորդի՛,— ըսավ դառնացած,— ասիկա բնավ չեմ պատմած...

— Պատմած ես,— կրկնեցի անողոք,— ամեն անգամ, որ կգինովնաս՝ նույն բանը կպատմես...

— Գինովը դո՛ւն ես,— ըսավ լուրջ,— գինովը դուն ես...

Ու կարծես հաստատելու համար, որ գինով չէ, թևս ձգեց ու սկսավ քալել՝ գավազանը ուրախությամբ զարնելով ու երգ մը մռմռալով: Ձայնը սակավ մաշած էր, կորսնցուցած իր հստակ ու մաքուր շեշտը ու ինք կտառապեր, որ չէր կրնար քաղցրությամբ երգել: Գլուխը մեղմօրեն կօրօրեր, ու աչքերը կմարեին տխրության և ուրախության խառն արտահայտությամբ մը: Բառերը, որ շրթներեն կիյնային գետին՝ հուզիչ էին ու շատ անուշ՝

Սիրո՛ւն գարուն, կանա՛չ գարուն,
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ,
Դուն մեզ բերիր լաց ու արյուն
Էլ ես ուրախ երգ չունեմ…

Հանկարծ երգը դադրեցուց ու ժպտուն դարձավ ինծի.

— Մտիկ ըրե՛,— ըսավ,— բան մը պատմեմ, ասիկա դեռ բնավ չեմ պատմած, ծուխ մը տուր, խաչե՛նք…

Խումբով մեր ընկերները մտան սրճարան մը: Առաջին ճանրակառքերը սկսան խաղաղությամբ անցնիլ: Մխախոտավաճառի կրպակ մը վերջապես բացվեցավ: Բանվորներ, դեռ քնատ ու դժգոհ, սովերներու պես լուռ սկսան անցնիլ մայթերեն: Երկինքը, գորշ շենքի մը տանիքեն, կիյնար վրանիս ճանճրույթով, փողոցի աղջիկ մը մեզ կեցուց սովորական բառերով: Դեմքը քիչ մը հոգնած էր, աչքերուն շուրջ թեթև բիծեր կային ու իր թթվածնաջրով ներկված մազերը՝ փակած էին քունքերուն: Անշուշտ սիրալիր կերպով կժպտեր, բայց ժպիտը իր ճանրային աղջկա խոնջ դեմքին վրա կդառնար տխուր ծամածռություն: Հոնքերը՝ փոքրիկ, մանրանկար աքցանով՝ քաշված էին ու տեղը կեռ, թրի նմանող սև գըծեր կային նուրբ ու հուսահատական, ինչպես որ նորույթ է: Աչքերուն տակ կային խոր և մութ ծալքեր: Մորթը, հակառակ ներկված ըլլալուն, ցանոտ էր ու կարծես նուրբ, փափուկ: Բերանը կարմիր էր՝ հուսահատական կերպով ու ձայնին մեջ, հակառակ իր արտասանած բառերուն ամբողջ քնքշության, կզգացվեր արուներուն դեմ սնուցած իր ամբողջ ատելությունն ու արհամարհանքը: Երբ նկատեց, թե սովորական գիշերաշրջիկներ չենք ու հետը երթալու մտադրություն չունինք՝ *բերանը ավըրեց,* ինչպես կըսեն մեր քաղաքը: Դեմքը դարձավ գեշ, քինախնդիր, կարելի է ըսել՝ սև: Աչքերեն իսպառ մեկնեցավ ամեն սուտ ժպիտ, հայհոյությունները, որ սկսան թափիլ շրթներեն՝ գեշ էին, աղտեղի ու կհիշեցնեին անասելի անառակություններ, որ հատուկ են ծեր, չնացող, անկարող և վավաշ մարդոց: Բարեբախտաբար «Երրորդ Հանրապետության» բշվառական ոստիկաններեն մեկուն աղոտ համազգեստը երևաց փողոցին անկյունեն: Օրիորդը՝ արագությամբ փոխեց դիմակը, աչքերը խոնավությամբ սկսան ժպտիլ ու տրտում և հայցող ձայնով մը դառնալով ինծի՝ ըսավ.

— Պարոն, կբարեհաճեի՞ք գլանիկ մը տալ…

— Սիրո՛վ,— ըսի տխուր:

Երկուքս ալ ժպտեցանք ու զուցե հաշտվեցանք:

— Զով է, չէ՞ պզտիկ պարոնս,— ըսավ պզտիկ ձայնով:

— Այո՛,— ըսի,— մանավանդ երբ մարդ քիչ մը խմած է:

Կուզեի մայթին վրա կենալ ու խոսիլ հետը, բայց ընկերս թեւս քաշեց ու տարավ ներս: Թանձր ու ծանր էր օդը: Ծխախոտի ծուխը կբարձրանար լայն խավերով առաստաղը: Սպասյակը բարձրաձայն կհայտարարեր ճաշվեցեղանին առջեւ.

— Երկու սեւ սուրճ:

— Երկու կաթ:

— Երեք ճավկիթ:

— Հաց:

— Խոզի երշիկ:

— Կապույտ ծրար մը գլանիկ:

— Երեք թուխ գարեջուր:

— Մեկ խարտյաշ:

— Եվ մեկ մսի ջուր:

Խումբ մը արքայական սրիկաներ, իբր թե ուսանող՝ բարձր ձայնով կխոսեին, իրենց խոսակցությունը պարտադրելով (մեծ մասամբ օտարական), կարծես շեշտելով, որ հոս, Ֆրանսայի մեջ, իրենք իրավունք ունին պոռալու և եթե օտարականներ գոհ չեն՝ կրնան մեկնիլ (լա՛վ, լա՛վ): Աղջիկ մը՝ կրքով կպագներ տղու մը բերանը, ու ծեր կին մը կնայեր իրեն, ես ալ ծեր կնոջ, ընկերս ալ ինծի ու բառերը ծամելով և դեմքը կնճռոտ, ընկերս կըսեր, թե՝

— Թո՛ղ երթան սենյակնին սիրվըրտին, շանորդի՛ք...

Իսկ ես, ինքս ինձ կըացատրեմ, որ եթե այդ տղան ու այդ աղջիկը երթան սենյակնին ու դուռը փակեն՝ անպայման պիտի ձանձրանան, հոս, բազմության մեջ, այդ համբույրը շատ ավելի գրգռիչ է, շատ ավելի հազվագյուտ: Մեզմե մեկը կխոսի բարձր ձայնով ու ծեր կինը հիմա կնայի մեզի, ես ալ իրեն խստությամբ ու ընկերս ալ ինծի, հետո թե՝

— Ինչո՞ւ համար այդ պառավը մեզի կնայի...

— Սպասյա՛կ...

— Խոզի՛ ապուխտ...

— Սպասյա՛կ...

— Թե՛յ, թմբի, կաթ...

— Սպասյա՛կ

— Հաշիվ...

— Անմիջապես, տիկի՛ն, անմիջապես, պարո՛ն...

Արքայական ուսանողներեն մեկ քանին, համաձայն իրենց սովորության, ուռուցիկ ու ծփուն նախադասություններով և բարձրաձայն՝ ուրպեսզի բոլորը լսեն, կխոսին օրվան հարցերուն շուրջ. մինչ մյուսները

լիանազաց կերգեն, անախորժ ու ճինցած ձայներով՝ գինովի հիմար երգ մը, որ կըսէ.

Երբ ոտքերըս տնկեմ՝ կուզեմ, որ զիս թաղեն,
Մեծ մառանի մը մեջ՝ ուր կա լավ գինի,
Ուր կա լավ գինի...

— Մայրերնիդ,— կըսէ հայերեն ընկերս ու կամաց, ձեռքը դնելով ուսիս ու ծռելով վրաս,— մտիկ ըրէ՛, քեզի բան մը պիտի պատմեմ...

— Հաջորդ անգամ,— կըսեմ ժպտուն:

Միտքս կաշխատի: Կպտտի որոշ գաղափարներու շուրջ, կանգ կառնե ու կրկին կմեկնի: Կմտածեմ թե՝

— *Ֆրանսացի* ուսանողները ցուցամոլ են, ունայնամիտ, սնապարծ, հագվիլը շատ կսիրեն, սովորամոլ են և կամ արտառոց նորություններու հետևող...

— *Սլովեն* ընկեր մը ունիմ, որ կըսէ թե՝ կարելի չէ ֆրանսացի ուսանողներու հետ ունէ լուրջ խնդրի մասին խոսիլ: Ամեն բան կատակի կվերածեն, իրավունք ունի:

— Այսուհանդերձ իմ ճանչցած ֆրանսացիներուս մեջ՝ լուրջ ու աշխատասեր տղաք կան: Բայց ընդհանրապես՝ ֆրանսացի բսածդ մանրքաղքենի է, առանց հեռանկարներու, առանց մեծ բաներու կարոտին, նյութապաշտ, գծուծ ըսել կուզեմ, օտարատյաց...

— Տարօրինակ է: Ինչպե՞ս այս ժողովուրդը կրցած է պատմության ամենամեծ հեղափոխությունները իրագործել: Մարդկության առաջատարը դառնալ...

— Տասնութերորդ, տասնիններորդ և քսաներորդ դարու բոլոր մեծ եղելությունները կամ ծնած են այս հողին վրա և կամ ներշնչված են հոսկե...

— Ռուսական մեծ հեղափոխությունը անհնար էր առանց Փարիզի անմոռանալի համայնքին...

— Տարօրինակ ժողովուրդ...

Ու միտքս կաշխատի միշտ: Կդեգերի ուրիշ մտքերու շուրջ: Կանգ կառնե, կնաշվե թերն ու դեմը: Կքննե, կկշռե՝ եզրակացնելե առաջ, մինչդեռ վիժած ու բշվառական արքայականները կերգեն՝ իրենց խռնավ և տհաճելի ձայնով՝

Երբ ոտքերըս տրնկեմ՝ կուզեմ, որ զիս թաղեն
Մեծ մառանի մը մեջ՝ ուր կա լավ գինի,
Ուր կա լավ գինի...
Կուզեմ, որ զիս թաղեն՝ ոտքերըս պատին դեմ

Ու բերանըս դըրած՝ բաց ծոցակին տակ,
բաց ծոցակին տակ...

Ընկերս թե՝

— Մայրերնին, քույրերնին, շանորդիներուն, մտիկ ըրե, պատերազմի երրորդ տարին, *Նիսիպինի* մոտ, արաբական գյուղի մը մեջ...

— Գիտե՛մ, պատմած ես,— կըսեմ անգութ,— ամեն անգամ, որ գինովնաս՝ նույն բանը կպատմես...

Ու ընկերս, գինովի իր շփոթ գլխուն մեջ՝ կփնտրե պատմություն մը, որ չէ պատմած: Ամբողջ մարմնով ինկած է վրաս ու լավ տղու իր աչքերուն մեջ կտեսնեմ հստակորեն, մերկ ու մուրացիկ ափի մը պես սիրտը բանալու, իր վշտերն ու ուրախությունները ինծի հետ բաժնելու անհուն փափաք մը: Կարծես թե կըսե, քաղցր և տրտում ձայնով մը՝

— Գիտե՞ս, իրավ է, գինով եմ, բայց խելքս գլուխս է, միայն թե քիչ մը ուրախ եմ, քիչ մըն ալ տխուր, մտիկ ըրե բան մը պատմեմ, քիչ մը խմած ենք, կյանքը ի՞նչ է որ, խմեր ես, չես խմեր, նո՛ւյնն է: Անշուշտ չափազանցելու չէ, բայց մենք չափազանցած չենք, հինգ հոգիով յոթը շիշ ջրախառն գինի՝ մեծ բան չէ, գեշ բան մը չըրինք, տարվան երեք հարյուր վաթսունըհինգ օրեն մեկն ալ թող այսպես անցնի, ի՞նչ կըսես...

Իսկ ես մտովի՝

— Աչքերդ, հայու անուշ, տաք, սև աչքերդ սիրե՛մ, ընկե՛ր...

Դուրսը լույսը բացված է արդեն: Փողոցին մեջ՝ ձայները կշատնան ու կբարձրանան: Մեծ քաղաքին շշուկը կսկսի մեծնալ ու լենալ հերս: Արքայական ուսանողները երերալեն տուն կերթան: (Իրենց գիշերային աշխատանքը վերջացուցած բոզիկներ կուզան նախաճաշի ու գաղտնիկ՝ շահերնին կհաշվեն): Ընկեր մը երկու ժամե ի վեր կխոսի ուրիշի մը հետ՝ ջերմ ու համոզված ձայնով մը: Վերջին նախադասությունը թե՝

— ... Հայոց ժողովուրդը լավ ժողովուրդ է, ախպե՛ր, չարքաշ, աշխատասեր: Նախքան պատերազմը՝ Վասպուրականում...

— Տղա՛ք, ելլե՛նք...

— Նստե՛, ծո՛, կիրակի է (սպասյա՛կ, կխնդրեմ այստեղ...):

Ու միտքս կաշխատի միշտ: Հիշատակներու, գաղափարներու— զանազան դեպքերու շուրջ խաղաղությամբ կդեգերի ու ինքն իրեն կպատասխանե, կըսեմ թե՝

— Գինովությունը մեզ կմերկացնե մեր բոլոր վերապահումներեն, հագուստներեն, առեյությունններեն: Մեր հոգին խաղաղորեն կհանվի ու կմնա մերկ՝ մարդոց աչքերուն տակ: Ինչպես անձնատուր եղած ու լերկ ափ մը գուշակի մը առջև՝ այնպես ալ մեր հոգին ինքզինքը ցույց կու-

[illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

— [illegible]

[illegible]

մարդոց, աղխատին և ճարուստին ճավասարապես, ու երջանկութենեն բարձրաձայն կպոռա։ Ես կնայիմ իր ձեռքերուն՝ երկար, նուրբ, փղոսկրյա, ու ընկերս, որ կհետևի նայվածքիս՝ տխրությամբ կըսե.

— Կյանքիս մեջ՝ մեկ հատ հայ աղջիկ չեմ տեսած, որ այդքան գեղեցիկ ըլլա (լա՛վ, լա՛վ, ի՞նչ ընենք, մարդ պե՛տք է գոհանա իր ունեցածով...), ձեռքերը կարծես մեղրամոմե շինված են, կին չէ, հապա երազ, անկարելի երազ...

Նույն տղան, որ երկու ժամե ի վեր կխոսի, համոզված ու տաք ձայնով, զինվի հուզիչ ձայնով, դեմքը քաղցրորեն հակած մյուսին ու ձեռքերը ջղայնությամբ շարժելով՝ նախադասություններուն հետ, երկվայրկյան մը կանգ կառնե ու կնայի մեզի, հետո կրկին կվերսկսի իր անսպառ հիշատակներուն հետ կռվիլ։ Վերջին նախադասությունը թե՝

— ...Փետրվարյան կռիվներ, կողքիս՝ վասպուրականցի մի ծերուկ մարդ կար, կարծում եմ կարնեցի... ախպե՛ր, ինչ ուզում ես ասա, հայոց ժողովուրդը քաջ ժողովուրդ է, լավ ժողովուրդ...

Հետո՝ երջանկությամբ ու մասնավոր ախորժակով կուլ տալով ծխախոտին ծուխը, իր նուրբ, երկար ու տժգույն դեմքը հակած մյուսին՝

— Լսի՛ր, քաղաքը թողնելու նախօրյակին հանդիպում եմ մի շատախցի զինվոր տղայի, մեր լավ ընկերներից, ասում է— գիտե՞ս, ես իրենց հերը... բոլոր մտավորականները եղել են, շանորդի՛ք...

Ու երկուքով կսկսին բարձրաձայն խնդալ՝ ամբողջովին մանկական, առողջ ու բարերար ծիծաղով մը, գլուխնին օրորելով։ Հետո պատմողը կսկսի գլանիկ մը փաթթել՝ իր տժգույն, գինովի իր դողահար մատներովը ու հիմա՝ իր առողջ ծիծաղը, որ դարձած էր խաղաղ ժպիտ՝ աչքերեն մեղմորեն կիջներ շրթներուն անկյունը և կդառնար վշտի ծամածռություն։ Հուսահատ ու մելամաղձոտ, նայվածքը պարապին մեջ՝

— Չէր լինում, հե՜յ, շանորդիք մնում էին թիկունքում, հառ ասում ու վտանգավոր վայրկյաններում եղում...

Կնայիմ իր սիրուն, պզտիկ ու տժգույն դեմքին, տմույն շրթունքներուն, գլանիկին, որ կիսավառ կկախվի, սպիտակ, անծալ ճակատին, դողահար, աշխատասեր ձեռքերուն, որ ջղայնությամբ կհետևին իր նախադասություններուն ու հուզումս կմեծնա։ Ձայնը պզտիկ է, տրտում ու շատ անկեղծ։ Հանկարծ դեմքը դարձնելով ինծի՝

— Էս շանորդին իրավունք ունի, ախպե՛ր, մտավորականները լիրբ են, ես իրենց հոր հոգին...

Գիտե՛մ, որ վաղը պիտի զղջա այս խոսքերուն համար։ Առավոտը պիտի արթննա, բերանը դառն, գլուխը՝ ծանր և չփոթ ու այս արտասանված բոլոր խոսքերը պիտի վերադառնան իր հիշատակին, ինք որ միշտ

կվինի հետս ու դեմքը պիտի կորսնցնե իր խաղաղությունը: Պիտի հիշե բառ առ բառ, ինչ որ ըսավ ու պիտի ամչնա, կնայիմ իր բարի աչերուն ու կատակով կըսեմ.

— Եթե պատահի, որ ոևէ պզտիկ գյուղի իշխանությունը ձեռքս ըլլա՝ այնպես պիտի հալածեմ մտավորականները, որ գյուղի սահմաններուն չհամարձակին մոտենալ...

Մյուս ընկերս թե՝

— Մեր քաղաքը մտավորական ըսված բանը չկար: Քանի մը հատ դրսեն եկած ուսուցիչ, թեմին առաջնորդը...

— Երջանիկ քաղաք, երջանիկ ժողովուրդ...

Ծխախոտիս ծուխը քուլա-քուլա կբարձրանա ու ծուխին մեջեն հիշատակի բեկորները կվերադառնան ինձի՝ շարք առ շարք, հանդիսավոր խաղաղությամբ: Ամերիկուհիին մեղրամոմե անթերի ձեռքերը հանգըստորեն կհանգչին զիստերուն վրա: Այդ ձեռքերը կնմանին՝

— Արձանի պաղ ու հրաշալի ձեռքերու: Երբ մարդ ջերմություն ունենա, երբ ձեռքերը դողան սիրո կամ գինովության դողով՝ զանոնք սեղմե՛ս ափերուդ մեջ, օ՛, անսվաղ աչերուդ մեջ...

— Կնմանին այդ մեղրամոմե անթերի ձեռքերը՝

— Ծաղիկներու: Այծտերևի[1]՝ խնկավետ ու տժգույն ծաղիկներու: Մեր պատին վրա, հորին քով, անոնք կկախվեին կիսամութին մեջ՝ հուզիչ լքումով մը և երբ լուսնկան ծագեր՝ անոնք կնմանեին թուրք լուսնահիմա ու նվաղուն տիկիններու սատափյա ձեռքերուն...

— Օ՛, կհիշե՛ս, կհիշե՛ս, վանդակապատ պատուհաններուն ետևեն անօրինակ թրքուհիներու ձվաձև ու սպիտակ դեմքերը: Նշաձև ու սև աչքեր կուսենային ու իրենց կրքոտ ու նվաղուն նայվածքները կթափառեին մեր կապույտ ու անուշ ծովին վրա՝ հեռավոր առագաստանավերու պես...

— Անգամ մը, Արևելքի մեջ, գաղջ ու խոնավ փողոց մըն էր, բոկոտըն ու ապերջանիկ կթափառեի, երբ ծանր ու երկաթապատ դուռ մը մեղմիկ հոնչաց ու դռան ճեղքեն երևաց հրաշալի ու աննման ձեռք մը, ծանրաբեռնված թանկագին քարերով ու կարծես թե թափանցիկ: Եղունգները վարդագույն էին, կիսով հինայված ու ինձի կթվեր թե անոնց բուրումը կզգվեր աղքատ տղու անոթի ռունգներու: Սկսա երգ մը սուլել, գըդակս ծռեցի ու ամբողջ օրը, երջանկորեն թափառեցա, հագեցած այդ քաղցր ձեռքին հիշատակով...

— Երբեմն ես կմտածեմ մարդոց բոլոր ձեռքերուն վրա: Անոնց զգվանքներուն՝ մութին մեջ և անոնց անօրինակ զոհողություններուն, բոլոր հնարավոր չարիքներուն, որ անոնք կրնան ընել և բոլոր ուրախու-

---

[1] *այծտերևին* (Chevre fenille) *Թրքերը կըսեն «Հանըմ էլի»— տիկինի ձեռք:*

թյուններուն, որ անոնցմե կուգա: Այսուհանդերձ (ինչպե՞ս ըսել, եթե ըսեմ՝ գիտեմ, ոչ ոք պիտի հավատա) այս բոլոր հրաշալի ու աննման ձեռքերը, որ ծույլ են, անաշխատ ու հաճախ անպատիվ, ես չեմ փոխեր՝ իմ աշխատավոր ընկերոջս խոշոր ձեռքերուն հետ: Անոր աջ ձեռքը ավելի մեծ է քան ձախը, իր կատարած աշխատանքին պատճառավ: Եղունգները մաշած են քիչ մը ու ափը, որ մարդուն ամենեն մտերիմ ու ամենեն զգայուն մասերեն մեկն է, ծածկված է կոշկոռներով ու ակոսված սև բիծերով: Ու այդ ձեռքը մանուկի պես կամչնա՝ աղջիկներու նայվածքին տակ...

— Առաջ իմ ձեռքերս ալ այդպես էին: Շուրջ երկու տարի է սակայն՝ անոնք փափուկ են ու մաքուր, և ես կամչնամ անոնցմե...

Ու միտքս կդեգերի միշտ, և կմտածեմ բազմաթիվ ձեռքերու մասին, որ ես կճանչնամ՝ ընկերոջ, բարեկամի, աղջիկներու, որ չեմ սիրեր, աղջիկներու, որ կսիրեմ, կանանց, ծերերու, մանուկներու ձեռքերու՝ անմեղ ու անապավեն, մտավորականներու՝ քաղաքավար և խարդախ, բանվորական ձեռքերու՝ հավատարիմ և չարչարված, մորս, հորս, քրոջս և եղբորս ձեռքերուն, որ ավաղ փտած են հիմա հողին տակ՝ ծաղկի մնացորդներու պես, բանաստեղծներու, փողոցի աղջիկներու, պաշտոնական մարդոց և սուտ հեղափոխականներու ձեռքերուն ու այս բոլոր ձեռքերուն մեջ, ավա՜ղ ո՛չ մեկ ձեռք գիտեմ, որ ընդունակ ըլլա զիս վիհին եզերքը կեցնել: Խաղաղությամբ հպի քղանցքիս ու հուզե զիս: Եթե մեկնիլ ուզեմ, կարենա զիս պահել...

— Անգամ մը երիտասարդ բանաստեղծի մը ձեռքը սեղմեցի ափիս մեջ: Տարօրինակ ձեռք մըն էր՝ գեջ ու խոնավ ու կարծես թե վախկոտ ու դողահար: Երբ բաժանվեցանք՝ մտածեցի այդ ձեռքին վրա երկարորեն, գիշերը իմ անկողնին մեջ ու զգացի, որ հանցավոր բան մը ունի իր վրան: Երբ ընկերոջ մը պատմեցի այս բոլորը, ժպտուն ըսավ— գիջացող մարդու ձեռք է, ատեհի պես կդողա ու ամառ ձմեռ խոնավ է, կպչուն ու տհաճելի խոնավությամբ...

— Ձեռքեր կան, որ անպատմելի վստահությամբ մը անձնատուր կըլլան ափիդ, կարծես թե սիրտ ունին ու կբաբախեն: Անոնց բարեկամության ամենախիստ մարդն իսկ հուզումեն կոկարանա...

— Ձեռքեր կան, որ անգութ են, խիստ ու դավադիր մարդու ձեռքեր, ոսկրուտ ու ջղուտ, որոնց զորությունը ահ կազդե զրկված ու տըկար մարդոց...

— Ձեռքեր կան՝ մեղկ ու հեշտասեր, բարի մարդու լայն ու անհիշաչար ձեռքեր՝ վարժված զուրգուրանքի ու պատվավոր աշխատանքներու...

— Ձեռքեր կան հաստ, մսագործի անողոք ու արյունոտ ձեռքեր՝ վարժված ոճիրի և գծծության:

— Կան կույսի, իշխանուհիներու, բանաստեղծներու և թոքախտավոր մարդոց ձեռքեր՝ սպիտակ ու տրտում, թիապարտներու և կալանավորներու ձեռքեր, որ կմաշին, և հայ հանդիսավոր եպիսկոպոսներու՝ ծանրաբեռնված մատանիներով, որ զարմանալի վստահությամբ մը կմոտենան աղջիկներու վարսերուն և ճոխ սեղանի մը համադամներուն՝ հավասար սիրով: Ու վերջապես՝

— Ո՞վ չի հիշեր՝ Նազովրեցիին ծակված ու չարչարված ձեռքերը, խաչին վրա՝ պաղատագին ու արյունաքամ, հայցելով խաղաղություն տառապողներուն համար, խաղաղությո՜ւն...

Հետո իմ ձեռքերս կան, իմ տարօրինակ ձեռքերս, մերկ ու անսվաղ ափերով, որ անընդհատ կսուրան հանույքներու վրա ու անընդհատ կտառապին: Իմ ձեռքերս՝ որ տարիներե ի վեր ահա կաշխատին աշխատավորի ձեռքեր դառնալ ու չեն հաջողիր: Ի՛նչ որ կրնան ընել՝ այս ձեռքերը բան մը չէ, չարիք՝ ինծի, բարիք՝ ուրիշներուն: Երբեմն անոնք չար են, քինախնդիր ու ոխակալ ու քիչ անգամ միայն՝ բարի ու անձնվեր: Բնական ու անզուսպ շարժումով մը անոնք կձգվին ուրիշ ձեռքերու վրա ու կրքով կսեղմեն զանոնք:

Գլխահակ ու մտածկոտ կվերադառնամ տուն: Բոլորը գացին ննջելու, իսկ ես գիտեմ, որ չպիտի կրնամ քնանալ: Պատուհանս պիտի բանամ առավոտյան դեմ ու պիտի մտածեմ՝ այս գիշերվան ընթացքին արտասանված բոլոր խոսքերուն մասին, քաղցր հուզումով: Օդը ցուրտ է ու բարակ դող մը ուսերես կթափանցե ու կհասնի ծունկերուս: Գիշերաշրջիկ մը կանցնի քովես: Ծառերը կդողան առտվան շունչեն: Տուներու դռները ահա կբացվին: Ծխախոտ մը կվառեմ ու կշարունակեմ ճամփաս: Ու միտքս կաշխատի միշտ, հիշատակե հիշատակ կդեգերի ու որոշ դեպքերու առջև կանգ կառնե՝ մինչդեռ ձեռքերս՝ խաղաղությամբ կհանգչին գրպաններուս մեջ՝ սպասելով թուղթ մրոտելու ժամուն, որ գիտեն թե պիտի գա...

մոլիկ ու ծեր մարդու մը երգը՝ ցավարեկ ու տրտում նոթերով կբարձրանար մինչև հինգերորդ հարկ ու բաց պատուհանեն կլենար ներս: Ծխախոտիս ծուխը խաղաղորեն կբարձրանար առաստաղ: Շատ մը հոգեր ունեի ու շատ մը անհետաձգելի աշխատանքներ, բայց որոշած էի ծուլանալ ապրիլի իրիկունով: Մեկ երկու ժամ այն պատրանքը ունենալ, թե ընելիք ոչինչ չունիմ ու երջանիկ մարդ մըն եմ և այս մտածումներուս հետ էի, երբ հանկարծ երգը դադրեցավ ու երգին հետ անվերադարձ մեկնեցավ կարծես այս օրվան համար իմ երջանիկ անփութությունս: Բազմաթիվ առարկություններ գլուխ ցցեցին՝ զինված փաստերու անվերջ մթերքով մը՝ ապացուցանելով, որ այս գեղեցիկ ապրիլի իրիկունով, գարնանային այս երկինքին տակ ապրող բոլոր աղջիկներուն և տղաքներուն մեջ ամենեն ապերջանիկներեն մեկն եմ: Կարծես թե երկու մարդիկ կվիճեին այդ վայրկյանին՝ իմ հինգերորդ հարկի խուցիս մեջ, երրորդի մը մասին, որ ես էի: Ու մեկը կըսեր մյուսին, թե չէ՝ այս երիտասարդ տղան, որ ես շատ լավ կճանչնամ՝ երջանիկ չէ: Իսկ մյուսը կպատասխաներ, արհամարհանքով թոթվելով ուսերը, հակառակողի մը պես, որ իր զորության գիտակցությունը ունի ու իր փաստարկության ամբողջ ծանրությունն ու հնչիչ ուժը չի նետեր նժարին մեջ՝ թե գիտե՞ս, «երջանկությունը» վերացական բառ է ու բոլոր վերացական գաղափարներուն պես կրնա առարկա դառնալ բազմաթիվ մեկնություններու: Ամեն բան հարաբերական է, ու երջանիկ մարդ չկա հոս:

Եվ ես վառելով գլանիկ մը՝ թույլ կուտայի, որ այս երկու մարդիկը՝ հանգստորեն վիճին երրորդի մը մասին, որ ես էի, այդ վայրկյանին, կռնակին վրա պառկած անկողնին վրա, վայելելով ծխելու անառարկելի հաճույքը: Տարօրինակ վիճաբանություն էր նախապես խաղաղ, բայց որ հետզհետե կդառնար տենդոտ ու կիրք հարուցանող: Կողմերը՝ իրար կպատասխանեին արագ ու ամեն բան վճռող վստահությամբ ու ինչպես, մեր ժողովներուն մեջ հաճախ կպատահի, իրար կընդմիջեին ձեռքի և բազուկներու կտրուկ ու առարկություն չվերցնող շարժումներով, նախադասություններու կտորներ խլելով իրարու բերնե ու առարկության չհանդուրժելով: Երբեմն, տենդի ու խանդավառության տագնապի մեջ՝ ինչպես մարդ կզինովնա մանկական սնափառությամբ՝ իր սեփական խուքին խաբուսիկ հմայքեն՝ անոնք կվիրավորեին իրար՝ զարմանալով թե ինչպե՞ս՝ այդքան վերջնական ու սպառիչ փաստերու առջև, այդքան գեղեցիկ կերպով ապացուցված իրողության մը ներկայության՝ հակառակորդը կժպրհի խոնարհիլ ու կշարունակե մնալ սխալ գետնի վրա: Ստիկա անշուշտ կապացուցաներ ընդդիմախոսին տգիտությունն ու պատրաստության պակասը, մտքին դանդաղաշարժությունը՝ որ վաղուց ծա-

# ԵՐԲ ՍԵՆՅԱԿԻՍ ՄԵՋ ՄԱՐԴԻԿ ԿՎԻՃԻՆ

Ընկերոջ մը կսպասեի՝ երկնցած անկողնիս վրա ու համաձայն սովորությանս՝ ծխելով: Դուրսը ապրիլի գեղեցիկ երեկո էր: Փողոցեն շըրջ-

մոլիկ ու ծեր մարդու մը երգը՝ ցավաբեկ ու տրտում նոթերով կբարձրանար մինչև հինգերորդ հարկ ու բաց պատուհանեն կլենար ներս: Ծխախոտիս ծուխը խաղաղորեն կբարձրանար առաստաղ: Շատ մը հոգեր ունեի ու շատ մը անհետաձգելի աշխատանքներ, բայց որոշած էի ծուլանալ ապրիլի իրիկունով: Մեկ երկու ժամ այն պատրանքը ունենալ, թե ընելիք ոչինչ չունիմ ու երջանիկ մարդ մըն եմ և այս մտածումներուս հետ էի, երբ հանկարծ երգը դադրեցավ ու երգին հետ անվերադարձ մեկնեցավ կարծես այս օրվան համար իմ երջանիկ անփութությունս: Բազմաթիվ առարկություններ գլուխ ցցեցին՝ զինված փաստերու անվերջ մթերքով մը՝ ապացուցանելով, որ այս գեղեցիկ ապրիլի իրիկունով, գարնանային այս երկինքին տակ ապրող բոլոր աղջիկներուն և տղաքներուն մեջ ամենեն ապերջանիկներեն մեկն եմ: Կարծես թե երկու մարդիկ կվիճեին այդ վայրկյանին՝ իմ հինգերորդ հարկի խուցիս մեջ, երրորդի մը մասին, որ ես էի: Ու մեկը կըսեր մյուսին, թե չէ՝ այս երիտասարդ տղան, որ ես շատ լավ կճանչնամ՝ երջանիկ չէ: Իսկ մյուսը կպատասխաներ, արհամարհանքով թոթվելով ուսերը, հակաճառողի մը պես, որ իր զորության գիտակցությունը ունի ու իր փաստարկության ամբողջ ծանրությունն ու ճնշիչ ուժը չի նետեր նժարին մեջ՝ թե գիտե՛ս, «երջանկությունը» վերացական բառ է ու բոլոր վերացական գաղափարներուն պես կրնա առարկա դառնալ բազմաթիվ մեկնություններու: Ամեն բան հարաբերական է, ու երջանիկ մարդ չկա հոս:

Եվ ես վառելով գլանիկ մը՝ թույլ կուտայի, որ այս երկու մարդիկը՝ հանգստորեն վիճեին երրորդի մը մասին, որ ես էի, այդ վայրկյանին, կռնակին վրա պառկած անկողնին վրա, վայելելով ծխելու անառարկելի հաճույքը: Տարօրինակ վիճաբանություն էր նախապես խաղաղ, բայց որ հետզհետե կդառնար տենդոտ ու կիրք հարուցանող: Կողմերը՝ իրար կպատասխանեին արագ ու ամեն բան վճռող վստահությամբ ու ինչպես, մեր ժողովներուն մեջ հաճախ կպատահի, իրար կընդմիջեին ձեռքի և բազուկներու կտրուկ ու առարկություն չվերցնող շարժումներով, նախադասություններու կտորներ խլելով իրարու բերնե ու առարկության չհանդուրժելով: Երբեմն, տենդի ու խանդավառության տագնապի մեջ՝ ինչպես մարդ կգինովնա մանկական սնափառությամբ՝ իր սեփական խոսքին խաբուսիկ հմայքեն՝ անոնք կվիրավորեին իրար՝ զարմանալով թե ինչպե՞ս՝ այդքան վերջնական ու սպառիչ փաստերու առջև, այդքան գեղեցիկ կերպով ապացուցված իրողության մը ներկայության՝ հակառակորդը կժպրհի խոնարհիլ ու կշարունակե մնալ սխալ գետնի վրա: Ատիկա անշուշտ կապացուցաներ ընդդիմախոսին տգիտությունն ու պատրաստության պակասը, մտքին դանդաղաշարժությունը՝ որ վաղուց ծա-

նոր էր մեզ, բթամտությունը, նրբամտության պակասը, չարամտությունը ու չհասկնալ ուզելու և հասկնալ չկարենալու բացորոշ իրողությունը: Այլապես ի՞նչպես կարելի էր չհամաձայնիլ, որ այս այսպես էր և ո՛չ ուրիշ կերպ:

Իսկ ես՝ միշտ, խաղաղո՛ւթյամբ կշարունակեի ծխել, ամբողջովին ականջալուր այդ շինիչ ու իմաստուն վիճաբանության, որ վերջանալու երևույթ չուներ, կողմերուն համառության ու ակներև գերազանցության բացակայության պատճառով: Լավ ճաշած էի ցերեկին ու քիչ մըն ալ խմած ու եթե շիտակը կուզեք, ոչ թե ընկերոջ, հապա ընկերուհիի մըն էր, որ կսպասեի և արդեն հոգնե է, որ ընդդիմախոսը կմեկներ անվիճելիորեն ապացուցանելու համար, որ այս երիտասարդ քաղաքացին երջանիկ է: Անշուշտ ոևէ ձևով չէի ուզեր միջամտել, հանելի ու նկարագեղ վիճաբանություն էր, երբեմն միայն՝ քիչ մը կնեղվեի տեսնելով, որ կողմերը իրարու հանդեպ հարգանքի պակասի մեջ կգտնվին, ի՛նչ որ սովորական է, կըսեմ, մեր ժողովներուն մեջ, բայց որ անթույլատրելի է երբ երկու քաղաքավար ու կրթված քաղքենիներ սենյակի մը մեջ իրարու հետ ոևէ լուրջ խնդրի մասին կխոսին, ախորժաբեր ու լավ թրջված ճաշե մը հետո: Տարօրինակը այն էր, որ կողմերը չէին հանդուրժեր, որ մեկը կամ մյուսը ժամանակ կամ հնարավորություն ունենա՝ իր մտքերը լրիվ կերպով զարգացնելու և իր փաստերուն մինչև ծայրը երթալու: Կբավեր, որ մեկը նախադասություն մը արտասաներ, որպեսզի մյուսը արդեն գուշակեր մնացյալը: Մարդիկը հիմար չէին, գիտեին թե իրենց դիմացինը ի՛նչ պիտի ըսե ու նախադասությունները իրարու բերնե խլելով՝ կլրացնեին ընդդիմախոսին ըսելիքը: Ու ասիկա տեղի կուտար շատ մը թյուրիմացություններու, որովհետև՝ անտարակույս մարդիկը իրար ըմբռնելու մտադրություն չունեին: Մեկը նախադասություն մը կըսեր ու մյուսը զայն կհասկնար հակառակ կողմեն, ապահովաբար ճենգամտությամբ չէր, չէ՛, նույն լեզուն չէին խոսեր: Հետո՝ երբ մեկը կխոսեր, մյուսը, որ պարտավոր էր երկյուղածությամբ մտիկ ընել, ընդհակառակն, կզբաղեր իր պատասխանին վրա մտածելով, նոր փաստեր ու նոր փաստարկություն հավաքելով, որ ապահովաբար՝ այս անգամ պիտի ջախջախեին հակառակորդը: Ասիկա կհայտնվեր հաճախ՝ ընդդիմախոսներու մտքերուն ու հայտնած կարծիքներուն միջև գոյություն ունեցող կապի և հարաբերության պակասեն: Վերջապես, կարճ խոսելով, մարդիկը կխոսեին իրենք իրենց համար՝ առանց նկատի առնելու դիմացինին լուրջ կամ անլուրջ առարկությունները, այնպես որ տարօրինակ խառնիճաղանճ մը առաջ կուգար ինչպես հաճախադեպ է մեր ժողովներուն մեջ, ուր ամեն մարդ կխոսի ինքզինքին համար, գեղարվեստական առանձին հանույ-

քով, զոր այպանելը ավելորդ է ու ինչ խոսք, անկիրթ մարդոց հատուկ:

Բայց ես, որ միշտ կծխեի և որ պարտավոր չէի միջամտել, մոտավորապես կհասկնայի, թե խնդիրը ո՞ւր է ու հանույքով կհետևեի վեճին: Պետք է խոստովանիլ, որ երկու քաղաքացիներն ալ կխոսեին մասնավոր դյուրությամբ ու ըստ երևույթին՝ երկուքն ալ քաջածանոթ էին առաջադրված խնդրին, երկուքն ալ կուտային անառարկելի փաստեր, ու ես համոզված էի, որ եթե առանձին-առանձին մտիկ ընեի զիրենք՝ պիտի համաձայնեի, որ երկուքն ալ իրավունք ունին: Բայց կնկատեի, որ երկուքն ալ մասնավոր փութկոտությամբ զանց կառնեին հակառակորդին ճիշտ առարկությունները ու զգալի էր, որ ո՛չ մեկը տարհամոզվելու դույզն մտադրություն չուներ, ո՛չ ալ փափաք: Մարդիկը գոհ էին իրենց գիտցածեն և ոչ մեկ գնով իրենց ինքնասիրության չպիտի թույլ տային, որ հակառակորդը փորձեր հաղթական ըլլալու գոհունակությունը սնուցանել: Ու որովհետև ընկերուհիս պիտի գար մութը իյնալեն հետո և սեղանիս վրա երկու ծխախոտի տուփեր կային՝ ես թույլ տվի, որ այդ մարդիկը սենյակիս մեջ վիճեն, նյութ ունենալով իմ զանցառելի ու խոնարհ անձնավորությունս ու քրքրելով ամբողջ կյանքս, աշխատանքներս և զբաղումներս:

Մասնավոր փութկոտությամբ ու հոգածությամբ անոնք նախ ճշտեցին իրենց վեճին նյութը: Ասիկա սակայն տևեց ավելի քան կես ժամ ու համաձայնությունը, որուն հանգեցան՝ արժեց երկուստեք՝ բավական հոգնություն և ֆիզիկական սպառում: Այսուհանդերձ՝ համաձայնությունը սրտառուչ էր ու երկուքին ալ դեմքերը ուրախութենեն ցոլացին: Վերջապես՝ պատրաստված ու կիրթ մարդիկ էին ու գիտեին, թե վիճիլ ի՞նչ կնշանակե: Եվ որպեսզի վիճաբանությունը արդյունքի մը հանգեր՝ պետք էր, որ նյութը նախ ճշտվեր ու սահմանափակվեր: Պետք չէր, որ կողմնակի խորհրդածություններով ու նյութին հետ կապ չունեցող խնդիրներով հարցը խճողվեր, ինչպես որ կպատահի մեր ժողովներուն մեջ: Մեկը մյուսին կըսեր, թե իրար չհասկնալու գլխավոր պատճառներեն մեկն ալ այն է, որ մարդիկ հարցը սպառիչ կերպով ու հստակորեն չեն դներ: Անգամ մը, որ դրվի, խնդիրը կպարզվի: Բայց երբ մարդիկը կուզեին հարցը դնել, հո՛դ էր, որ դժվարություններ կծագեին: Առաջինը վեճի նյութը այլ կերպ կսահմաներ և երկրորդը՝ այս կերպ: Խոսակցության սկիզբը մեկն այսպես ըսած էր, իսկ մյուսը՝ այն կերպ: Ու երկուքն ալ տենդով և կրքով՝ կբողոքեին, թե իրենք ո՛չ այդ կերպ և ո՛չ ալ այս կերպ ըսած էին, հապա ըսած էին այսպես: Երբ վերջապես, երկար խարխափումներե հետո, հասան նախահանգիստ ու վերջնական ձևով, սևով սպիտակ թուղթի վրա գրված՝ ճշտեցին վեճին նյութը, ես լայն շունչ մը

արձակեցի, ելա ոտքի, պարպեցի մոխրամանս, որ լեցած էր մոխրով և գլանիկի մնացորդներով, վառեցի խաղաղորեն նոր գլանիկ մը, ժամացույցը նայեցա, դեռ ժամ մը ժամանակ կար նվիրելու այս շինիչ վիճաբանության, հետո երկնցա անկողնիս վրա ու քանի մը վայրկյան բեղուն լռութենե հետո՝ սկսա մտիկ ընել...

* * *

Ուրեմն՝ փոխադարձ համաձայնությամբ, գրված սևով սպիտակ թուղթի վրա և միանգամընդմիշտ ընդունված երկու կողմերեն, վեճի նյութը առաջադրված էր հետևյալ ձևով՝

ա) Այս քաղաքացին, որ ապրիլի գեղեցիկ իրիկունով փոխանակ գրադարան երթալու՝ երկնցած կռնակի վրա, ուսանողի իր աղքատ անկողնին մեջ՝ անփութորեն գլանիկներ կծխեր՝ սպասելով ընկերուհիի մը՝ որուն հետ ավելորդ է ըսել, թե ինչ պիտի ընեին, երջանի՞կ էր թե չէ...

բ) Բայց նախքան այս հարցումին պատասխանելը՝ կողմերը արագ այլ սպառիչ ու լուրջ վիճաբանությամբ մը, զուրկ կոկոզավիզ ու հավակնոտ մարդոց հատուկ բառամոլութենե և խնայելով բոլոր ավելորդաբանությունները, որ արդյունք են դիմացինը իր մտքի գեղեցկության առջև նվաստացնելու հիմար նկատումին՝ պիտի ճշտեին, թե ի՞նչ ձևով կհասկնան երջանկություն ըսված բանը, որ անտարակույս վերացական բառ մըն է և կրնա տեղի տալ բազմաթիվ ու բազմատեսակ մեկնաբանություններու։ Պիտի համառոտ կերպով ճշտեին, թե ի՞նչպես կհասկընան մարդ մը, որ երջանիկ է և թե երջանկությունը մի՞թե մեծ չափով՝ ոսկով ազնիվ ու քանակով շատ հանույքներե կախված չէ՞ ու նույն ատեն տառապանքի ու նեղության պատճառներու բացակայութենե։

գ) Եթե այո, եթե երջանիկ ըլլալ կնշանակե ծավալով մեծ ու որակով ազնիվ հանույքներ ունենալ, որ ավելի ծանր կշռեն, քան առօրյա բոլո՛ր հոգերն ու տառապանքները, ապա ուրեմն, այս երիտասարդ քաղաքացին ո՞ր չափով երջանիկ է։ Բայց նախ՝ ի՞նչ բան է *հանույքը*։ Կարևոր է, չըսելու համար հիմնական, թե կողմերը ի՞նչ կհասկնան *հանույք* ըսելով։ Անտարակույս՝ ինչպես երջանկությունը, նույնպես և հանույքը վերացական բառ է ու կրնա տեղի տալ բազմաթիվ մեկնաբանություններու։ Կողմերը, ուրեմն, որքան կարելի է ամփոփ ու համադրող ձևով պիտի սահմանեն հանույքը, իհարկե քննելով հանույքի բոլոր ըմբռնումները, որ կան՝ հին հունական դասական գրողներեն սկսյալ մինչև արդիական մեծ մտածողներու գործերուն մեջ և հաշվի առնելով քանե-

րորդ դարու բարդ ու որոշ կողմերով նոր կյանքը ու այդ կյանքին ազդեցությունը՝ ժամանակակիցներու վրա...

դ) Ապա ուրեմն, կողմերը՝ եթե կարենան եզրակացության մը հանգիլ և համաձայն վենին ստացած բնույթին՝ կսկսին մանրամասնորեն քննել, թե ի՞նչ գլխավոր հանույքներ ունի այս երիտասարդ ընկերը, որ ապրիլի գեղեցիկ իրիկունով, փոխանակ պարտեզ երթալու, երկնցած կոնակի վրա, անփութորեն գլանիկներ կծխե։ Մեծ հանույքներ ունի՞ միթե և եթե ունի՝ որո՞նք են այդ հանույքները։ Հետո կողմերը անաչառությամբ կքննեն ու չափի կբերեն այդ հանույքները առանձին-առանձին, հույս ապա պատասխանելու համար առաջադրված առաջին հարցին, որ նյութին բուն նյութն է և խոսակցության կեդրոնական մասը։

Երբ այս հրահանգիչ վենը հասավ այս կետին՝ ես վայրկյան մը ելա ոտքի, որովհետև ընկերուհիիս այցելության ժամը կմոտենար, ու ես սենյակս դեռ չէի հարդարած։ Պատուհանիս առջևեն՝ ընկերուհիիս համար գնած ծաղիկներս բերի ներս ու տեղավորեցի երկարավիզ թաղարի մը մեջ։ Կապուտիկ ծծմորներ կային ու քիչ մը հոգնած վարդեր՝ խոնջ կարմիրով մը, կային անմոռուկի նուրբ ծիլեր, պզտիկ, մանրանկար ծաղիկներով ու հետո երկու կարմիր մեխակներ՝ մեկը իրեն և մեկը՝ ինծի համար։ Թաղարը դրի սեղանիս վրա՝ իր նկարին առջև։

Հետո՝ անկողնիս մոտ գիշերային սեղանը բերի կարգի։ Մեր սիրած բանաստեղծության գրքերը մաքրեցի փոշիներե ու դրի սեղանին վրա։ Մոխրամանին քով։ Վարագույրը կիսով փակեցի՝ սենյակը թողելով հաճելի կիսամութի մը մեջ ու մտածելով, որ այս կիսամութն ու լռությունը մարդը կտրամադրե հուզումի, բանաստեղծության, կիսաձայն բռված խոսքերու։ Հետո երբ ամե՛ն բան վերջացավ, երկնցա կրկին անկողնիս վրա, նոր գլանակ մը վառեցի ու դիտել տվի վիճող պարոններուն, որ պարտավոր են շտապել։ Կրնան առաջանալ՝ այրելով հանգրվանները, դասական ու արդի գրողները ձգելով մեկդի ու շտապելո՜վ, շտապելո՜վ։ Երկուքն ալ դժգոհ ու արհամարհոտ ուսերնին թոթվեցին ու իբր թե կարևորություն չավին ինծի, իրենց վենն վերսկսելով այն կետեն, ուր ձգված էին...

Վայրկյան մը մտիկ ըրի, բայց երբ տեսա, որ այս խորհրդածությունները, որ այնքան գիտությամբ հրապարակ կդնեին կողմերը՝ վերջանալու մտադրություն չունեին, ստիպված միջամտեցի, բացատրելով մեկուն և մյուսին, որ իրենք գեղարվեստի համար է, որ կխոսին, իսկ ինծի՝ խնդրին օգտակար կողմն է հետաքրքրական, հետևաբար պետք է մեկդի ձգեն բնազանցական մարզանքները։ Խոսքս մտրակի պես շաչեց

ու զայրացուց զանոնք ու արագությամբ գետինը մաքրեցին հարակից բոլոր խնդիրներէն ու գտան՝

ա) Որ առաջին հարցին, այս պայմաններուն մէջ և այսքան կարճ ժամանակի ընթացքին՝ դժվար է պատասխանել: Փիլիսոփայական բարդ հարց է երջանկության առեղծվածը ու իրենք՝ որքան ալ կիրթ ու մշակված քաղքենիներ՝ այսուհանդերձ չեն հավակնիր նման կեդրոնական խնդրի մը հապճեպ լուծում մը տալ: Ատիկա ոճիր է՝ իմացականության դեմ:

բ) Հետևաբար զանց կառնեն որոշել, թե այս երիտասարդ քաղաքացին երջանի՞կ է, թե չէ: Ու խնդրին քննությունը կհետաձգեն ուրիշ օրվան մը:

գ) Այս կետերը ճշտելե հետո՝ խնդիրը կդառնա պարզ: Ու կողմերը համաձայն են, որ կմնա ճշտել, թե ի՞նչ մեծ հաճույքներ ունի այս երիտասարդ, անոք մարդը և այդ հաճույքները ո՞րչափով *անխառն* են, *ապահով, անխաթար* ու *մնայուն*:

Որովհետև կողմերը շատ լավ կըմբռնեն, որ հաճույքներ կան, որ տհաճելի ու դժվար առավոտներ ունին, ուրիշներ, որ գեշ ու նվաստ հիշատակներ կձգեն իրենց ետին՝ անտեղի մնացորդներու պես՝ հանկարծ կերթան պարագնաց հորիզոններու կարոտին, իրենց բարերար անձրևը ուրիշ հողերու վրա պարպելու համար: Կան հաճույքներ՝ որ կպատկանեն մեզ ու կտանին նվաստութենե նվաստություն, անկումե անկում: Այս բոլոր հաճույքներու մեջեն, որ այս երիտասարդ քաղաքացին ունի, որո՞նք են գլխավորները՝ անխառն, ապահով, անխաթար և մնայուն:

Վեճը հետզհետե կդառնար կրքոտ, հետաքրքիր ու պատահեցավ, որ վայրկյան մը մոռնամ ծաղիկները, որ կբուրեին, ժամը, որ կառաջանար և ընկերուհիս, որ պիտի գար և ուզեմ՝ իմ կարգիս միջամտել: Բայց վիճողները ժամանակ չձգեցին ինձ ու սկսան մանրամասն «թվումն մասանց»ը ընել հաճույքներուն մեծ ու բազմաճյուղ ընտանիքին: Անվերջ ու անհամար էին այդ հաճույքները, որ ես ունեի, ունեցած էի կամ պիտի ունենայի ու ինչ նկարագեղ ու գեղեցիկ անուններով: Կուգային իրարու ետևեն՝ պզտիկ ու սիրելի, գարնանային ու ցոլարձակ դեմքերով, ժպտելով ու նազանքներով, սպիտակ հագած թարմ աղջիկներու պես կամ լուրջ, հանդիսավոր ու տրտում դիմագծերով՝ համաձայն իրենց բընույթին: Ու այս բոլոր հաճույքները մեկիկ-մեկիկ կուգային բեմ ու շընորհալի կամ լուրջ խոնարհություն մը ընելե հետո՝ կըսեին իրենց անունները և քաղցր երգ մը կերգեին կամ փոքրիկ «հուսկ բան» մը կարտասանեին՝ բացատրելով իրենց ծագումն ու արժեքը, տարողությունն ու անհրաժեշտությունը: Ու ես շփոթահար այս բոլոր հաճույքներուն

մեջտեղ՝ կզարմանայի, թե ինչպե՞ս չեմ անդրադարձած, որ մարմինս հողաշեն պալատ մըն է՝ օժտված ընդարձակ ու ծաղկած կանանոցով մը, ուր բնակություն հաստատած են այս բոլոր սիրելի ու սիրասուն աղջիկները: Ու մինչդեռ ես իմ մտքերու հետ էի, հետզհետե կուգային ուրիշներ՝ ծաղկած ու բաց գույն պարեգոտներով, թռվռալե՛ն, թռվռալե՛ն: Մեկը կըսեր՝

— Կհիշե՞ս, կհիշե՞ս զիս: Երբ մանուկ էիր՝ զիս ճանչցար ձեր պարտեզին մեջ: Առավոտյան կանուխ կարթննայիր ու մայրիկդ չարչարելու համար՝ կդավեիր հետս: Պարտեզին ածուներուն ու ճամփաներուն վրա կտարտղեիր նորաբաց ծաղկի թերթերը մանկական անգթությամբ: Ամբողջովին կպատկանիմ քեզի: Հասարակ հաճույք մը չեմ, գիտե՞ս, ու քիչ մարդիկ կան, որ զիս ճանչցած են: Զիս կկոչեն— *Ծաղիկները փրցնելու և մայրիկը վշտացնելու համար՝ ճամփաներուն վրա զանոնք տարտղնելու հաճույք*, հի՞ն օրեր, հե՜, հե՛ք, պզտի՛կ մարդ, վաղուց է իրար չենք տեսած...

— Իրա՛վ է,— կըսեմ տխուր,— ի՜նչ լավ, պզտիկ հաճույք մըն էիր, ի՜նչ լավ պզտիկ հաճույք մը...

— Իսկ զի՞ս,— կըսե ուրիշ մը,— իսկ զի՞ս, չե՞ս հիշեր: Ես գեղջուկ ու սովորական հաճույք մը չեմ: Հետս ծանոթություն հաստատեցիր՝ երբ արդեն արբունքի հասած՝ կրքոտ ու տենդահար պատանի մըն էիր: Երկար ատեն կռվեցար հետս ու կվախնայի, որ ի վերջո պիտի հաղթվիմ քու կամակոր համառությանդ առջև, բայց օր մը՝ երբ ծռած էիր, խոշոր աչքերով՝ գեղեցիկ տպագրության մը վրա՝ վերջապես իմ քաղցրաձայն ու ներշնչող խոսքերովս հաղթեցի քեզ: Զիս կկոչեն— *Գիրք գողնալու հաճույք*... գիտե՞ս, գեղջուկ հաճույք մը չեմ: Կպատկանիմ ազնվական ու մտավորական մարդոց ու ես ինձմե հպարտ եմ: Երբեմն նույնիսկ կպարծենամ: Բայց դուն քիչ մը տարօրինակ ես: Երբեք չկրցա քեզի սորվեցնել, թե գիրք գողնալը գողություն չէ և թե ընկերոջ, անծանոթին կամ գրադարանի գրքերուն մեջ տարբերություն չկա... Վերջին անգամ իրարու հանդիպեցանք, կհիշե՞ս...

— Լռե՛, լռե՛,— կըսեմ ամոթխած,— լռե՛ անպիտան հաճույք...

— Օ՜, օ՜,— կըսե բերանը կլորցնելով,— ապերախտ քեզի...

— Հապա զիս,— կըսե ուրիշ մը,— վստահ եմ, որ կհիշես,— ու ծռելով ուսիս վրա, ականջներուս տակ կփսփսա արտասովոր կերպով քաղցր երգ մը:— Զիս ճանչցար մանկությանդ վերջավորությանը ու երկար ատեն՝ միասին լավ ընտանիք կազմեցինք: Երբ տխուր ըլլայիր, երբ մեկը վշտացներ քեզ, երբ քեզ ծեծեին՝ իմ հոգնած ու հմայաթափ բարեկամս, մութին մեջ կուգայիր զիս կգտնեիր ու միասին կարտասվեինք:

Զիս կկոչեն— *Արտասվելու հաճույք...* հետագային մոռցար զիս ու նույնիսկ ոխ կապեցիր դեմս: Երբ կյանքիդ ճակատագրական ու դժվար վայրկյաններուն, հավատարմությամբ կուգայի կկծկվեի քովդ՝ տխրությամբ կնայեիր աչքերս ու հետո կզայրանայիր: Անգթությամբ կզարնեիր գլուխս ու դեմքդ կդառնար գեշ, սև, ոխակալ: Կըսեիր, թե արտասվելը տկարություն է ու կնոջ հատուկ ու պռկունքներդ կխածնեիր: Մայրիկդ կըսեր, որ անզգա ես, որովհետև իրեն պես սիրտդ պարպել չէիր գիտեր, իսկ հայրդ կպնդեր, որ շատ զգայուն տղա մըն ես: Ես, որ քեզ լավ կճանչնամ՝ չե՛մ գիտեր լավ, թե ո՞վ իրավունք ուներ ու տակավին շփոթության մեջ եմ քեզի հանդեպ: Տարօրինակ ես, տարօրինակ: Կհիշե՞ս, վերջին անգամ, քիչ մնաց, որ հեռվեն նշան ըներ ինձ, բայց ես քովդ էի ու թափանցեցի մարմնեդ ներս, բարձրացա կոկորդիդ ու սեղմեցի զայն՝ քաղցր հուզումով: Չեմ գիտեր, կարծեմ հեռավոր գյուղի մը մեջ էր: Հանկարծ իմացած էիր, որ լավ ընկեր մը մեռած էր, սիրտդ քիչ մնաց տկարանար, բայց կատաղությամբ թոթվեցիր գլուխդ ու սկըսար գլանիկ մը ծխել... Գիտնա՞ս, որքան կգթամ վրադ, կուզե՞ս հաշտվինք, հի՛ն ընկեր...

— Կորսվե՛,— կըսեմ խիստ,— կորսվե՛, էգի ծնունդ...

— Օ՜,— կըսե քմահաճ,— ի՞նչ լուրջ է ու ի՞նչ չար...

Ու այսպես՝ այս բոլոր հաճույքները շնորհալի շարժումներով կտողանցեին գլանիկիս ծուխին մեջեն ու հոգիս գերին էր անոնց խուսափուկ ու քաղցր հմայքին: Վիճող մարդիկը լռությամբ կեցած էին մեկ կողմ, ձեռքերնին կզակնուն ու հանդիսավոր ու հայտնապես կսպասեին միջամտելու հարմար վայրկյանին: Հանկարծ՝ խումբ մը կապույտ աչքերով մանկուհիներ ինկան բեմ ու սկսան արագությամբ հովողել, բաները խլելով իրարու բերնե ու կիսաձայն երգելով: Անոնց ձայնը մաքուր էր և անուշ ու իմ հոգիս նորածին գառնուկի մը պես, հոսուն ջրի մը եզերքը, կարծես կմայեր...

— Մեզ բոլորս լա՞վ կճանչնաս, ինչպե՞ս կրնաս չճանչնալ մեզ...

— Մենք մանկությունդ օրօրած ենք...

— Սիրո ժամուդ, վշտի ժամուդ...

— Կուգանք քովդ, մենությանդ ընկեր ենք մենք՝

— Երբոր օրը՝ ըլլա տղմուտ, երբ անձրև գա

— Գիշերվան մեջ՝ սրտիդ մեջեն կբարձրանանք՝

— Կուգանք, կուգանք, օ՜ կարգ առ կարգ՝

— Հին խորշերե, հին հուշերե, կըսենք՝

— Սիրե՛, սիրե՛, սիրե՜: Տարիներե,

— Տարիներե՜ ի վեր, գիտե՞ս, ընկեր ենք քեզ...

— Կպատկանինք՝ բոլորս մե՛կ, նույն ընդարձակ բնտանիքին…

— Դուն ո՞վ ես,— կըսեմ մեկուն ու ան իր պզտիկ դեմքը կհակե ջերմե բռնված դեմքիս ու իր պզտիկ ձայնովը կըսե ինծի:

— Ինծի կըսեն— *Հովիվի* երգ, կնվագեն զիս սրինգով…

— Իսկ դո՞ւն,— կըսեմ,— տրտում աղջիկ, ի՞նչ տժգույն ես…

— Ինծի կըսեն տխուր *մահերգ*, կնվագեն զիս ջութակով…

— Մի՞թե, մի՞թե, իսկ քեզ, ըսե՛, ըսե՛, ինչպե՞ս կկոչեն քեզ…

— Ինծի կըսեն, *սիրերգ, սիրերգ*, կնոջ ձայնով կերգվիմ ես…

— Օ՜, մինակ ես ու լրջադեմ՝ հերոսի պես…

— Օ՜, ո՛չ, ընկե՛ր,— կըսե կամաց,— ինծի կըսեն *հաշտերգու-թյուն*…

— Իսկ քե՞զ, իսկ քե՞զ, իսկ դո՞ւն, իսկ դո՞ւն:

— Իմ անունս է *դյուցազներգություն*…

— Սրբազան բառ,— կըսեմ զուռնա:— Ի՞նչ երգեր կան…

— Իսկ իմ անունս է *շարական*՝ Հայաստանյաց եկեղեցվո…

— Խունկ կբուրես ու հնություն՝ կըսեմ դժգոհ…

— Ու հայրենիք,— կըսե կամաց,— սուտ մի՛ խոսիր, գիտե՛մ, գիտե՛մ, կսիրե զիս…

— Օ՜, իրավ է՝ հնուց նվագ, օրորե՛ զիս: Իսկ դուն ինչո՞ւ կեցած ես պիրկ, կեցած ես դեգ՝

— Իմ անունս է, կըսե, *ռազմերգ*: Բոլո՛րը մեկ՝

— Մեզի կըսեն *երգի հանույք*, հին ծանոթներ ենք քեզի հետ…

— Կայրինք անվերջ, բարմ ենք հավետ, եկե՛ք, եկե՛ք…

— Զիս գրկեցե՛ք, ընկերներ հին՝

— Հի՞ն, հի՞ն, օ՜, հավերժ նո՜ր, հավերժ առույգ…

Ու բոլորը միասին՝ քաղցր ու տխրանույշ շրշյուններով կկորսվին միջոցին մեջ՝ զիս ձգելով անորոշ հուզումի մը գիրկը: Մխախոտիս ծուխը կծածկե ամեն բան, ու ես կվերադառնամ սենյակիս առանձնության: Ժամը կառաջանա: Դուրսը՝ տուներուն վրա՝ մութը կիջնա ծածկելով ամեն բան աչքերես: Լռությունը քանի մը վայրկյան կմնա անխզելի ու հանկարծ վիճողներեն մեկը՝ հեղինակավոր ու առարկություն չվերցնող ձայնով՝ կենդրե զայն ու ծեր դասախոսի մը լրջությամբ կըսե՝

— Այս բոլորը դատարկ ու մանկական հաճույքներ են, և ամպերու պես կցնդին: Մեր երիտասարդ ընկերոջ կյանքին մեջ՝ ես չորս գլխավոր հաճույքներ կտեսնեմ,— կըսե հանդիսավոր,— չորս գլխավոր հաճույքներ, որ բոլորը կարժեն…

Հուզված՝ կհետևիմ իր խոսքերուն: Սիրտս՝ մանուկի մը պես կխաղա ու կզգամ, որ կյանքը՝ այսուհանդերձ գեղեցիկ է:

— Առաջինը,— կըսե կամաց,— ու ցույց գլխավորը՝ *ընթերցումի* հաճույքն է, ապահով ու մնայուն, անխառն ու անխաբար...

— Ճիշտ է,— կըսեմ մտովի։— Իսկ երկրո՞րդը...

— *Խմելու հաճույքը*, գինովությո՛ւն, հին մեղք է, իսկ երրորդը,— կըսե անգութ,— *ծխելու հաճույքն* է, ծխել այսպես, պառկած կռնակի վրա, նայելով ծուխի սյունին ու գետին ձգելով ամեն մտահոգություն։ Ընդամենը երեք գինովություն,— կըսե խորհրդավոր,— բառերու, ըմպելիքներու և ծուխի՝ քաղցր ու բուրավետ։ Իսկ չորրորդ հաճույքը...

Ու դեմքը կմանկանա։ Կուզե ժպտիլ։ Անշուշտ կմտածե ընկերուհիիս, որ պիտի գա։ Ատիկա՞, չորրո՞րդ հաճույք, օ՜, ո՛չ,— կպոռամ գրեթե բարձր,— անկցի՛ կինը, անկցի՛ կինը...

— Ուրե՞մն,— կըսենք երկուքը միասին,— ուրե՞մն...

Դեմքս գունատ է ու շրթերս կդողան— *Մեռնելու հաճույքը*,— կըսեմ տրտում, ամե՛ն օր՝ *մեռնելու հաճույքը*, գաղափարի ու հաղթանակի համար, ամե՛ն օր, հանապազօր կովի ընթացքին...

— Թը՛ք, թը՛ք, թը՛ք... Դուռն է, բանա՛մ...

# ՄԵԼԱՄԱՂՁԻԿ ԺԱՄԵՐ

*1930— Փարիզ*

*Հունվար 1*

Նոր տարվա հետ կսկսին նո՛ր հոգեր: Ամեն օրվան նման՝ ամե՛ն տարի ունի իր ցավի բաժինը:

Առաջին անգամ ըլլալով կըմբռնեմ նոր տարիին նշանակությունը: Տեսակ մը վախ կա հոգիիս խորը— վախ առաջիկա ամիսներեն, անակընկալներեն, նոր հոգերե և այս չորս թվանշաններեն— 1930:

Անըմբռնելի և հեղակարծ բաներ տեղի կունենան հոգվույս մեջ: Մեծ տխրություն մը կա վրաս և մեծ, իրական հոգնություն մը: Կզգամ, սակայն, որ այս բոլորը պետք է ձգել հոս 1930-ի սեմին առջև ու նորոգության լրիվ ճիգ մը փորձել: Հասած եմ կետի մը, ուրկե անդին զառիթափ է ու տեղատվություն:

*5 Հունվար*

Հետզհետե կհամոզվիմ, որ իրավախոհություն մըն է կյանքը: Ու ասիկա, որովհետև երբեք չէ պատահած, որ ժամե մը, կամ առավելն

հետմիջօրեն մը ավելի տեէ ապրելու, շնչելու, երկրի կեղևին վրա ազատորեն դեգերելու ուրախությունս։ Տխրության մնայուն մրուր մը կա բոլոր հաճույքներուս խորը և հուսահատության անփարատելի զգացում մը կյանքի բոլոր երևույթներուն դիմաց։ Նաև հոգնություն՝ ամե՛ն հիգի ժամանակ ու երբեք այն առողջ ու խաղաղ վստահությունը, որ կընկերանա զորավոր մարդոց ուժի բոլոր արտահայտություններուն։ Կարևորը այն չէ, թե ստացակա՞ն է և կամ ընդոծին այս խոնջենքը, այլ այն, որ կարելի չէ զայն խլել մարմինես։

Հիմա, այս անափ ու գորշ տարածության վրա, որ իմ բժվառությունս է, ես կնմանիմ գիշերային թռչունի մը, որ ինկած է ջերմ ու լուսառոգ առտվան մը մեջ ու իր հուսահատ թևերով կսպասե մեծ ու վաղնջական խավարին։ Ծաղիկներեն, զարունեն ու գեղեցիկ աղջիկներու լուսաքաքախ աչքերեն այս հարահուն ու մեծ վախը, որ ունիմ՝ ամեն Մայիսի դիմաց ու ամեն պարտեզի դռան առջև՝ ուրիշ ի՞նչ կերպով կարելի է բացատրել։

Շատ հոգնած եմ ու աղարտված՝ մաքուր ուրախություններու համար և նույն ատեն հուսահատությունս այնքան զորավոր չէ, հանձնվելու համար անափ խավարին։ Կյանքս գծուծ իրավափոխություն մըն է, կնքված ուրիշին կողմե։ Զայն խզելու համար՝ զորությունս անբավական է ու բոլոր տկարություններս բավական զորավոր են, ավա՜ղ...

* * *

Փոքրիկ դեպքեր, շատ սիրելի մեկու մը ժպիտը— հնուց հիշատակ...

Պզտիկ մանրամասնություններ կարքնան երկար քունե մը, հետըզհետե տեղավորվելու համար հիշողությանս մեջ։ Մեծ բաներ չեն, շատ սիրելի մեկու մը բառերը, գուրգուրանքի կտորներ, հպումներ ձեռքերու, բաց աչքեր, ձյունով ծանրաբեռնված ճյուղեր, ննջողուկի մը մարմինը, առտուն, ցուրտ ու հեք՝ դռան առջև, ազռավներու կռինչ՝ խավարին մեջ և անձրևի կաթիլներ ապակիին վրա՝ երբ գիշերը մանուկ մը կարթնա իր անկողնին մեջ ու կփնդրե աղապատանքը շատ սիրելի մեկու մը... Պզտիկ ու աննշան մանրամասնություններ այս բոլորը, անցած բաներ— լույսի բեկորներ այս անափ տարածության մեջ, որ իմ բժվառությունս է։

Այս գիշեր սակայն, այս պզտիկ բաները ամբողջ իմ հարստությունս են և սրտիս սնունդը։ Արտե արտ թափառելով՝ ես կհավաքեմ այս մոռցված հասկերը և իմ տխրությանս մեջ, միայն դուն ես, որ ընկեր ես ինձ, ամենեն շատ սիրելի մեկը, որուն բեղուն ու մաքուր կոնքերեն ես ծնա և որ կմոռցնես ինձ, քանի մը վայրկյանի համար, որ տակավին ես ո՛չ

ոքի համար հաջողեցա ըլլալ շատ սիրելի մեկը և ո՛չ ալ շատ սիրելի ոևէ մեկը, քեզմե հետո...

Հիմա ո՛չ մեկ անփոխարինելի բան կա կյանքիս մեջ, ո՛չ մեկ բան, որմե բաժնվիլը դժնդակ ըլլար, անկարելի: Գեթ այդպես թվեր: Ու ասիկա *ողբերգական* է: Ու մտածել, որ հակառակ ամբողջ ժուժկալությանս՝ անկարելի է չգործածել այս բառը, որ ամբողջ պայմանադրական բովանդակության հակառակ՝ կպարունակե իմ ամբողջ բշվառությունս...

Ո՞ւր վերջացնել գիշերը, որո՞ւ հետ երթալ և ո՞ւր հանգիլ: Ի՞նչ հետապնդել և կամ ո՞ւր փնտրել քեզ, որո՞ւ վրա նշմարել աղոտ հետք մը քեզմե, հեռավոր նշույլ մը աչքերեդ, օ՜, շատ սիրելի մեկը, մա՛յր իմ...

Ուրիշներ պիտի կարծեն, թե բառեր են այս բոլորը: Բառ դո՛ւն ալ, շատ սիրելի մեկը... Սակայն միայն մենք գիտենք, մենք, որ օրն ի բուն կապրինք բառերուն հետ անոնց մեջ, չարագործ զորությունը: Թույնի պես զորավոր ու թույնի պես ամոքիչ և վնասակար, ես հիմա մարդ մըն եմ սակայն, որ Մեծ Պոնտացիին պես պաշտպանված է բոլո՛ր թույներուն դեմ ու դատապարտված այս անել, այս տարապարհակ խավարին:

Ինչո՞ւ համար այսպես մարդ մը եղա: Սպիտակ աջ մը չկա, որ զիս ազատ ափ հանե: Եվ անշուշտ դուն չես հանցավորը, դո՛ւն, որ զիս արյունովդ սնուցիր ու ընծայեցիր կյանքին, օ՜, *շատ* սիրելի մեկը, *տարլինկ մայն*[1]...

*6 Հունվար*

Երբեմն գծուծ ու արհամարհանքի արժանի երազներ կան կյանքիս մեջ, երազներ, որոնցմե կամչնամ: Բայց ո՞վ չունի նման տկարություններ: Ուրիշին վրեպը իմ արդարացումը չէ սակայն, ու այս երազները կմնան խոտելի:

Բարձրահասակ, լերկ դեմքով, արու և գեղեցիկ տղա մըն է *Նիքին*: Նայվածքը հեռուն, ձեռքերը՝ լքված բաներու պես սեղանին վրա, ձայնը՝ մելամաղձիկ, երբ կխոսեր իր հույսերուն մասին, հոգիս տարօրինակ ցանկությամբ մը կցանկար հանգիստ, ընդարձակ, լավ հարդարված ու մտերիմ սենյակ մը, փափուկ աևեյլյան բազմոցներով, դիվանով և բարձերով: Տաք ու առատ լույս՝ ասդին անդին, մեծ ու լայնարձակ պատուհաններ ու պատուհաններեն դուրս՝ մեծ ջուրեր, լիճ կամ ծով, դաշտանկար կամ հեռավոր ափեր: Պատերուն վրա դիմանկարներ, ժանտաջրեր: Մեծ ու հարուստ գրադարան մը, խոշոր, կաշեկազմ ու գեղազարդ գրքեր, սեղաններուն վրա՝ բանկագին իրեր, գլանիկներ, բանկ մոխրաման-

[1] *Իմ սիրելի (անգլ.)*

ներ, ծխամորճեր անկողնիս քով, ծուլության և հեզ ժամերու կարելիություն, հինավուրց ժամացույց մը՝ որ կետադրե օրը: Գիշերը՝ անափ, անփարատելի լռություն, հեռանկարին վրա, իսկ առավոտյան՝ գարնանային շշուկներ ու քաղաքի հեռավոր ձայներ: Ու վերջապես պզտիկ կին մը, մաքուր հագված ու սակավախոս, երիտասարդ կին մը միայն...

Հեռակարոտ ու տարօրինակ տղա մըն է *Նիքին*, կըսե— ծխե՛, ծխե՛...

— Առավոտ մը արթննաս,— կըսե հանկարծ,— խոշոր գումար մը սեղանիդ վրա...

— Հետո՞,— կըսեմ անձկությամբ,— հետո՞...

— Պայուսակդ կապես,— կըսե արագ, ձայնը՝ հեռու, օտար, տարօրինակ,— գլխարկդ դնես, մեկնի՛ս հեռու ափեր, նոր երկիրներ, աշխարհը լայն է...

Լռություն: Աղջիկ մը կա, որ համառությամբ կնայի մեզ: Իսկ մեզմե յուրաքանչյուրը կմեկնի առանձին՝ իր հեռավոր համփորդության համար, ծովերու և ցամաքներու վրայեն, կանցնի գետերու կամուրջներ, կհանդիպի քաղաքներու, մարդոց, անկարելի երջանկություններու, աղջիկներու անշուշտ, օ՜, անվերադարձ մանկություն...

Մեր համփորդությունը կմնա անկատար:— Երթանք *Վիքինկ*, խըմե՛նք...

* * *

Ինչո՞ւ համար վերադարձես ի վեր ես իմ տերս չեմ: Արկածախնդիր, կործանարար ոգի մը ամե՛ն բան կքանդե մեջս: Հուսահատ՝ բազմաթիվ բնազդներու սանձերը ազատ թողուցի, քիչ մը ազատություն վայելելու ու ավելի երջանիկ ըլլալու հույսով: Պատահեցավ ճիշտ հակառակը: Մեծ տխրություն մը կա վրաս, տխրություն մը, որ ամբողջովին հաղթած է ինձ, տխրություն մը, որ կնմանի հիվանդության, տխրություն մը, որ կնմանի անափ գիշերին, անփարատելի տխրություն մը...

*Նիքին* առատաձեռն ու տխուր տղա մըն է: Այսօր գինով էր: Երբ գինով ըլլա՝ իմացականությունը կաշխատի արագ, ձայնը կըլլա հեռու, օտար, տարօրինակ: Երեկոյեն մոտեցավ ու նստավ քովս: Լռեց:

— Նկատա՞ծ ես,— ըսավ հանկարծ,— մարդ կրնա բազմաթիվ արտաքին կռիվներե հաղթական դուրս գալ, բայց ներքին պայքարի մը մեջ պարտվիլ: Ու ասիկա այլապես եղերական է: Այսօր ջախջախված մարդու մը պես եմ: Առտվնե ի վեր ճյուղ մը կփնտրեմ, ճյուղ մը՝ կառչի՛մ...

— Մարդ մը կա մեջս,— ըսավ *Նիքին*,— որ կուզեմ սպաննել: Այս

մարդը ամբողջովին օտար է ինծ, տարբեր արյունե կարծես: Այսուհան-դերձ տարիներե ի վեր ես սնուցած եմ զայն: Ազռավի մը պես, որուն կեր կուտաս, որ հետո աչքերդ կացե, կնոջ մը պես, որ կտաֆցնես ծոցիդ մեջ, որպեսզի անընդհատ նվաստացնե, վիրավորե քեզ, գեշ ընկերոջ պես... Այդ մարդը հիմա կքրքջա երեսիս, դեղին ու դժնդակ քրքիջով մը: Ամեն տեղ կհանդիպիմ իրեն, կկրեմ զայն վրաս, ինչպես կաղերն իր մակաբույծը, ինչպես հղի կինը՝ իր ամորփին պտուղը որովայնին մեջ...

— Այդ մարդը կուզեմ սպաննել,— կըսե *Նիքին* իր հեռու, օտար, տարօրինակ ձայնովը:— Բայց ինչպե՞ս... Սիրտ չունի, որ դաշունահա-րես ու կքրքջա, կըսե, դեղին, դիվային, հաղթական քրքիջով մը, գիշեր-վան մեջ,— Օ՜, չէ՜, ննջել կարելի չէ, կարելի չէ: Լռությունը՝ երկաթա-ֆար...

— Ելի՛ր, երթա՛նք,— կըսե *Նիքին*,— երթա՛նք *Վիքինկ*, խմե՛նք...

*7 Հունվար, 1930*

Շարժանկարի կտավին վրա կապույտ գետ մը կար ու գետին եզեր-քը անկարելի աղջիկ մը: Ամռան խաղաղ գիշերամուտ էր: Երկնքին խորք աստղեր չկային ու խաղաղությունը կնմաներ հանգչող երգի մը: Սպի-տակ ծաղիկներ կային, որ կշնչեին դժվարությամբ: Ու լռությունը հղի էր: Ամբողջ դաշտանկարը կսպասեր ներկայության մը, աղջիկը իր բա-ցակային ու ես անկարելի սիրո մը: Նվագը խոնջենքով կիյնար այդ ա-մայի տարածության մեջ, երբ հանկարծ *ան* եկավ դաշտային կածանե մը:

Ծաղիկները կարծես սկսան ուրախությամբ շնչել, աստղերը սկսան արցունքներու պես ծագիլ, աղջկան աչքերը շողացին: Իսկ ես տխրեցա, որ երբեք այդ բացական չեմ եղած:

*10 Հունվար, 1930*

Շուտով հիսունը յոթ տարեկան պիտի ըլլար, այն վերջին տարին, աշնանը, երբ այդ բանը պատահեցավ: Մեր պարտեզը հուզիչ էր իր հոգնությանը և աշնանային լռումին մեջ: Ասդին անդին հետամնաց ծա-ղիկներ կային, նվաղած ու խոնջ գույներով, ուշ մնացած, մահվան սահ-մանված աղջիկներու պես սրտիուն, ֆաղցրաքախիծ: Հորին չուրջը խոշոր, դեղին սարիինայի ափանձև տերևներ կմեռնեին մեր ներբաններուն տակ: Միայն բարձրահասակ տանձենին էր, որ կկանգներ իր լռումին և ամ-բողջ գեղեցկությանը մեջ և մեծ ու գրեթե հասուն պտուղներ կկախվեին կնոջ կուրծքերու պես՝ գրգռելով մեր անհանգիստ, անհագուրդ ախորժա-կը:

Շուտով հիսունը յոթ տարեկան պիտի ըլլար, այն վերջին տարին, աշնանը...

Քունքերուն վրա, իր նուրբ, անաշխատ ապրած մարդու, սերունդէ սերունդ բարեկեցության ու հոգածության մեջ հասակ նետած գյուղական քաղքենիի մազերը այլևս սպիտակ էին: Գանգը հերաքափ չէր սակայն ու իր մաքուր, լերկ դեմքը ակոսված չէր խոր ու տհաճելի խորշոմներով: Բարակ, հեզնոտ, գրեթե զայրացկոտ իր վերի շրթունքը ծածկըված էր բարակ, սպիտակին տվող ու քիչ մը տրտում պեխերով, անփութությամբ կախված իր բարի, այլ քիչ մը խիստ ու նաև քիչ վհատ բերնին վրա, որ անտարակույս համբուրել չէր գիտեր բնավ: Ճակատը բաց էր, ընդարձակ: Աչքերուն մեջ միշտ հեռավոր ու օտար բան մը կար, մանավանդ այդ վերջին տարին, աշնանը...

Ժպիտը կարելի չէ հիմա հիշել, այս փայրկյանիս, ուրիշ շատ մը մոռցված բաներու պես, որ երբեմն կմեկնին անհետ ու մերթ ալ լռությամբ կվերադառնան հիշողությանս, ո՛չ ալ իր ծիծաղը, և ո՛չ ալ իր կիրթ, քաղքենի, հասարակ բաները ատող մարդու ձայնը: Մարդու մը՝ որ շուտով հիսունը յոթը տարեկան պիտի ըլլար և որ կվախնար հառաջիկա մահեն՝ իր ծառերուն և արտերուն, իր ընդարձակ, լայնախարիսխ տան և մեզ համար, ուշ ամուսնացած մարդու իր նորածիլ զավակներուն — հետամնաց պտուղներ ծեր ծառի մը վրա:

Այն տարին, աշնանը, բերքերը առատ էին: Կալը վերջացած էր կանուխ ու վաղահաս անձրևները սկսած էին ողողել մեր պարտեզը: Մեր ամբարները լեցուն էին արմտիքով: Փողոցին մեջ չորցած խոտի բարկ բույրը կրոներ օդը: Երբեմն հրապարակեն կանցնեին կրված, հոգնած խաղողի ողկույզներով ծանրաբեռնված այգեկութքի կառքեր: Հուզիչ, հղի բան մը կար մթնոլորտին մեջ: Ծիծեռնակներու երամներ սկսած էին մեկնիլ հեռու, անտես ափեր՝ խաղաղ և լուռ թևաբախումներով: Երեկոները դաշտերեն վերադարձող կիներու և դպրոցեն արձակված տղոց ձայները կխառնվեին իրարու: Եվ ահա՝ գյուղական այս հեռանկարին վրա էր, որ գիշերամուտին, դանդաղորեն իր բարձր հասակը կուրվագծվեր փողոցի խաղաղության մեջ: Կքալեր հանդարտ ու պզտիկ քայլերով ու իր անցած տեղերուն վրա կմնար անորոշ մաս մը իր հարգանք ներշընչող ու վստահության արժանի մարդու լրջութենեն: Մեղմ ու զուսպ շարժումներով՝ կբարևեր աջ ու ձախ: Աղջիկները իրենց աչքերը կկախեին ու ծեր կիներուն նայվածքները կարծես կթրջեին, որովհետև ան գեղեցիկ եղած էր իր երիտասարդությանը: Եվ դեռ հիմա տռփհքնող, հուզիչ բան մը կար իր ամբողջ անձին վրա:

Շատով հիսունը յոթը տարեկան պիտի ըլլար, այն վերջին տարին, աշնանը...

Անշուշտ ծեր էր ալ: Ատիկա կզգացվեր իր ձեռքերուն վրա, որոնց հիշատակը վերջերս սկսած է անձկություն պատճառել ինծի: Բարակ ու խոնջ ձեռքեր էինատոնք, կապույտ երակներով ու արդեն քառամելու վրա: Քիչ մը ոսկրոտ էին ալ, քիչ մըն ալ չոր ու նաև քիչ մը դողդոջուն: Ցասման պահերուն ես զանոնք կտեսնեմ ամբողջովին սպիտակ ու անարյուն:

Անշուշտ ծեր էր ալ: Ատիկա կզգացվեր նաև իր առօրյա կյանքին մեջ: Տրամադրությունը՝ քիչ մը շատ փոփոխական էր ու պզտիկ դեպքեր, անկարևոր մանրամասնություններ, անարժեք միջադեպեր պատճառ կըլլային, որ փոքրիկ հարուցաներ ու խռովեր մեր տան ներքին մթնոլորտը: Երբեմն երբ զիս տեսներ փողոցի փոշիին մեջ, աշխատավոր մարդոց զավակներուն հետ, երիտասարդ անասունի մը պես վայրի, զըվարթ ու անզսպելի՝ ազնվատոհմ մարդու արյան ամբողջ ումգնությամբ կզայրանար ու անողոքելի ակնարկով մը զիս կղրկեր տուն: Երբեմն ալ մեծ ընկերոջ մը պես կսիրեր զիս ու այդ մտերմության մեջ, հիմա հըստակորեն կզգամ, իր անապարանքը զիս մեծցած, հասունցած տեսնելու՝ մանավանդ այն վերջին տարին, աշնանը...

Հայտնապես պզտիկ եղբայրս կնախընտրեր ինծմե: Ատիկա ես հիմա գիտեմ անառարկելի ճշմարտության մը պես՝ վերակազմած ըլլալով ամբողջ անցյալը, օր առ օր ու տարի առ տարի, իմ ծուլության պահերուս, երբ բոլո՛ր հոգերս ու ուրախությունններս կվերադառնան ինծի ու ես կվերադառնամ մեր հայրենի տան: Այդ նախընտրությունը զիս չի վշտացներ սակայն ու իր հիշատակը կմնա անաղարտ ու մաքուր ամեն բիծե:

Օր մը, վերջին տարին աշնանը, անձրևոտ կիրակի առավոտ մը կարծեմ, դեռ վաղ արշալույսին, ան զիս գտավ մեր գրադարանին առջև, խոժոռ, կաշեկազմ գրքի մը առջև: Զկամ մոտեցավ ու իր տժգույն դեմքը հակած վրաս, հարցուց, թե ինչո՞ւ բնավ եկեղեցի չեմ երթար: Այդ հարցումը զիս անակնկալի բերավ, այսուհանդերձ հանդուգն տղու խոշոր աչքերս բարձրացուցած դեմքին՝ հարեցի— Հայրի՛կ, դո՛ւն ալ չես երթար...

Ճակտի խորշումները կարծես ավելի զգալի դարձան, նայվածքը դարձավ կարծր, իր բարակ շրթունքները կծկվեցան իրենց սովորական պըրկումովը, պրկում, որ ծեր մարդու իր դեմքին կուտար կարծր, զորավոր արտահայտություն մը: Ատիկա կպատահեր ամեն անգամ, որ հարվածեր զիս: Բայց այս անգամ իր ձեռքը մնաց հանդարտ՝ անօգուտ իրի մը պես: Ու հետո լռությամբ հեռացավ: Անկե հետո երբեք ձեռք չբարձրացուց

վրաս այլևս, ու ես զգացի զորությամբ, որ պզտիկ անզուսպ մանուկը չեմ ալ, որ միշտ կծեծեն և որ իր մորը աղապատանքը կհայցե տխրության ժամերուն...

Շուտով հիսունը յոթը տարեկան պիտի ըլլար, այն վերջին տարին, աշնանը...

Ու, անշուշտ, ատոր համար էր, որ հաճախ կմտածեր մանկան մասին ու ատոր համար էր, որ ավելի տենդով ու ջերմությամբ կսիրեր կյանքը: Ամեն իրիկուն, տուն վերադարձին, պարտեզին ծառերուն վրա, ծաղիկներուն, իր հինավուրց տանը պատերուն, իր կնոջ և զավակներուն վրա՝ հոգին զորավոր վստահությամբ մը կհանգչեր: Փոքրիկ բաներ են այս բոլորը, աննշան հիշատակներ, որ հունը գտած ու երջանիկ մարդ մը պետք է վաղուց մոռցած ըլլա, մինչդեռ ամեն օր, այս փոքրիկ բաները, մտքիս հորիզոնին վրա կկուտակվին անընդհատ, կարգով ու շտապով կվերադառնան ինծի և ես կվերադառնամ հայրենական մեր խաղաղավետ տան...

Ո՞ւրկե սկսիլ սակայն և ո՞ւր հանգիլ: Այս փոքր բաները, վայրկյաններ կան սակայն, որ ամբողջ իմ կյանքս են ու երբ սպիտակ էջ մը թուղթ չըլլա՝ վրան հակելու և կաթիլ առ կաթիլ արտասվելու համար զանոնք, ես ընդունակ եմ առաջին հանդիպող մարդը կեցնելու և ըսելու իրեն.

— Գիտե՞ս, շուտով հիսունը յոթ տարեկան պիտի ըլլար, այն վերջին տարին, աշնանը: Նրբանասակ ու տրտում մարդ մըն էր, մարդ մը՝ օժտված աղվոր իմացականությամբ մը և զորավոր բարությամբ մը՝ որ տկարութենե չախորժիր ու գրությունը, հասարակ ու կանացի գրությունը, խոտելի կհամարե: Կսիրեր լայն ու լավ կառուցված խորհրդածությունները, կուսակից էր կարգապահության ու իշխանության, իր տունեն ներս ու իր տունեն դուրս, հանրային գործերու մեջ: Ատոր համար էր անշուշտ, որ երբեք չկրցավ զիս լիովին սիրել, ես որ անզուսպ ու պզտիկ անիշխանական մըն էի ու առօրյա ամենեն զանցառելի դեպքերուն մեջ իսկ կմերժեի մեծերուն հեղինակությունն ու ընդունած կարգը: Իմ ամբողջ պզտիկ անձես կհայտնվեր անքեֆ ու բնածին ըմբոստություն մը ու նո՛ր գաղափարներու, նո՛ր բաներու, կործանումներու և նոր կառուցումներու անհագուրդ ծարավ մը: Մինչդեռ պզտիկ եղբայրս սրտառուչ լռջությամբ մը կշարունակեր զայն իր ճաշակներուն և նախասիրություններուն մեջ:

Վերջին տարին, աշնանը, արդեն սկսած էին մեր նամփաները տարբերիլ: Մեր տանը օրաթերթը, հակառակ իր ամբողջ գիտուն ու ուսումնասիրված լռջությանը, ծիծաղ կպատճառեր ինձ: Ես կսիրեի ուժգնու-

թյամբ ու կրքով լսված խոսքերը, որ մարդուն մեջ զորավոր զգացումներ կհարուցանեն ու մեզ կմղեն ծայրահեղության: Բռնության, ուժի, բարկ ու խիստ բաներու ճաշակս կարտահայտվեր նույնիսկ ճաշի սեղանին վրա՝ համեմներու, պղպեղի և մանանեխի չափազանց գործածության մեջ, հուսահատություն պատճառելով հորս, որ չափի զգացում ուներ, ամեն բանի մեջ ու իր նկարագրին ամբողջ խստությամբը կատեր «հասարակ», ժողովրդական բաներու իմ շեշտված հակումս:

Մեր տարբերությունը կհայտնվեր նախ առհասարակ մեր բոլոր արարքներուն և հանապազօր ուրախություններուն մեջ: Ու մինչդեռ՝ ան զուսպ էր, վերապահ, չափավոր ամեն հուզումի արտահայտության մեջ, ընդհակառակն ես՝ ցասումս կամ դժգոհությունս կհայտնեի բարձր ձայնով ու ձեռքի անհանգիստ ու լայն շարժումներով: Մեր կազմերով ալ տարբեր էինք իրարմե: Ինչպես ըսի նուրբ ու սպիտակ էր ան, մինչդեռ ես խոշոր ու զորավոր ոսկորներով ու գրեթե թխադեմ տղա մըն էի: Արյունը կհորդեր երակներուս մեջ ու ձեռքերուս վրա ու անընդհատ մարմինս հեղափոխության մեջ էր ու անհանգստության:

Հիմա, երբ որոշ ընկերներ, չարախինդ այլ ծածկված հեգնությամբ մը, անընդհատ ինձ կհիշեցնեն, թե ես ալ իրենց նման մարդ մըն եմ՝ մտավորական ու քաղքենի հակումներով ու գռեհիկ ուրախությամբ մը, զիս մոտեցնելու համար իրենց, կմերժեն չորրորդ դասակարգի, վարի խավի մարդու իմ ամբողջ անցյալս, կրքերս, զայրույթներս, ես կմտածեմ հուզումով մանկությանս, ու վստահությունս կմեծնա: Ահա կարգով, մեկ առ մեկ, կքննեմ մեր ընտանիքին, մոտիկ ու հեռավոր բոլոր անդամները, բոլորն ալ, առավել կամ նվազ չափով, հորս ցեղեն էին՝ հպարտ ու հեռավոր՝ ժողովուրդին հետ ու անոր դիմաց ու պիրկ ու խիստ՝ իրենց ընտանեկան առավելություններուն համար: Ինչո՞ւ համար ես միշտ ապստամբի ու օտարի նման եղած եմ այդ մթնոլորտին մեջ: Մինչև հիմա ես վայրենի մեկն եմ, որ մարդոց հետ վարվիլ չի գիտեր, ո՛չ ալ բարևել, ծերը հարգել կամ մանուկը սիրել: Հրաժեշտի պահուն մարդիկ կվախնան զիս համբուրել, որովհետև կրնամ զիրենք հրել անդին: Օր չանցներ, որ չլսեմ երեց ընկերներու կես-սիրալիր, կես-սրտնեղ հանդիմանությունները— կոպիտ— թերակիրթ, լիրբ, անիշխանական...

Ինչո՞ւ համար ես այդպես մարդ մը եղա և ոչ ուրիշ կերպ: Ինչո՞ւ համար անընդհատ հոգիս նեղության մեջ է գեղեցիկ կիներու, քաղքենիներու, մտավորականներու և այլ կրթված մարդոց ներկայության ու ընդհակառակն՝ կրթված ու ուրախ չորրորդ դասակարգի, վարի խավի մարդոց հետ: Ինչո՞ւ համար, այս յոթը տարիներու ընթացքին ո՛չ մեկ մտավորական հաջողեցա սիրել ու ո՛չ մեկ մտավորականի լրիվ վստա-

նության ու բարեկամության արժանի ըլլալ: Իմ ճանչցած բոլոր մտավորականներն ալ, իրենց հոգվույն խորը, չեն սիրեր զիս: Հեռավոր բըշնամիներ ունիմ, որ զիս չեն ճանչնար, բայց որ կատեն զիս: Ու երբ տակավին, բոլորն ալ, բարեկամություն կկեղծեն, պատճառը ուրիշ է: Ոմանք կվախնան ինձմե՝ անզուսպ ու խածան բնավորութենես, ուրիշներ՝ անգիտակցաբար կճարպեն հոգեկան անկախությունս պահելու համար փորձած հուսահատական ու հարատև ճիգս, բայց բոլորն ալ կզգան, որ վրաս հաշվել կարելի չէ, օր մը կրնամ դաշինքը խզել ու խածնել իրենց բեզանիքը: «Խախուտ» մարդ ես, ըսավ օր մը ընկեր մը, բայց ե՞րբ դաշնակից եղած եմ իրենց, ե՞րբ ճակատ կազմած եմ իրենց հետ որ...

Օ՛, այո՛, վրաս հաշվել կարելի չէ: Չորրորդ դասակարգի, վարի խավի մարդու, իմ ամբողջ բռնությամբ, պարզ, հասարակ, հեղափոխության չնչին ու անարժան զինվորի իմ ամբողջ անքեֆելի հպարտությամբս՝ կատեմ ձեզ: Դեռ քանի՞ անգամ պետք է կրկնել ձեզ այս բոլորը, որպեսզի զիս հանգիստ ձգեք ձեր անարգ ու ստոր հաշիվներովը, ձեր պզտիկ խաղերով, որով կաշխատիք ինձմե ուրիշ մը հակադրել ինձ, ձեր ցած ու ծածկված հեգնություններովը զիս մոտեցնել ձեզի: Ինչո՞ւ համար իմ բոլոր լավ ընկերներս ձեր շարքերեն չեն, ինչո՞ւ համար երբեք ձեզմե մեկը ոևէ զոհողություն չէ կրցած ընել ինձ համար ու ես ոևէ մեծ զիջում չեմ կրցած ընել ձեզմե ոևէ մեկուն համար, սիրե՛լ ձեզմե ոևէ մեկը...

Մանկությանս կապույտ մշուշին մեջ անտ պայծառ առավոտ կրացվի, ու ես զիս կտեսնեմ՝ ինչպես որ եմ այսօր: Բիրտ՝ բնավորությամբս ու դժգոհ ընդունված կարգերեն, ապստամբ՝ դպրոցին մեջ ու պիրկ՝ հայրական հեղինակության դիմաց:

Ոսկորներուս վրա կոտրած են բազմաթիվ գավազաններ ու ոտքերուս առջև կուտակված են հանդիմանություններու բոլոր տեսակները, առանց զիս կարենալ փոխելու: Այսուհանդերձ ի՞նչպես եղավ, որ հակառակ բոլորին հուսահատության, հակառակ իմ խոտելի վարքիս՝ այսօր հայրենական գյուղաքաղաքիս մեջ ծնած քիչերեն մեկն եմ, որ ազնիվ բան մը կրցած են ընել, իրենց սիրած մարդոց համար: Բազմաթիվ անծանոթ ու հարգելի դեմքերու մեջեն, որ մեր գյուղաքաղաքին լռությունը կլեցնեին, դանդաղորեն չորրորդ դասակարգի մարդու իմ անտաշ ու կիսակիրթ դեմքս բարձրացավ, պարտադրելով, որ մարդիկ նային իրեն ու հիշեն զայն...

Հայրատություն չէ. որ կզգամ, ո՛չ ալ հաղթանակի ունայնամտություն: Իրական հաղթանակը, ես հիմա գիտեմ, մարդ ուրիշին վրա չի տանիր, այլ իր սեփական անձին դեմ: Ինչ որ կզգամ՝ իմ տարբերու-

թյունն է ուրիշներէն, իմ ակներև ու շատերուն համար խոտելի տարբերությունս: Այդ տարբերությունը, որքան ալ փոքր, իմ ուրախությունս է և իմ հաղթանակս: Ես զայն ընդունակ եմ պաշտպանել նույնիսկ իմ սիրած մարդոցս դեմ, հորս դեմ՝ եթե կարելի ըլլա, որ անոր անձը զարթնու անցյալի խավարեն ու ցցվի դեմս, որպես անողոքելի թշնամի:

Թեև ես միշտ կսիրեմ զայն, գուցե այդ տարբերության համար իսկ: Իր տեսակին մեջ՝ ազնիվ ու զորավոր մարդ մըն էր ու իր ձեռքերը, երբեք անարգ բաներ չէին բրած: Կսիրեր ծառերը, որ աշնան հովին տակ կդողդողեին, իր արտերը, որ խոպան են հիմա և իր ընդարձակ ու լայնախարիսխ տունը, որպես ժառանգություն անկորուստ ընտանիքի մը, որուն միակ շառավիղը ես եմ հիմա ավա՜ղ... Կսիրեր գեղեցիկ բաները, որ շուտ չեն հիննար, անասունները, որ լավ կաշխատին, աշխատավորները, որ հլու են և հավատարիմ ու իր հանգստությունը՝ շատ մը բաներե առաջ: Գյուղական տիպար քաղքենի ու որպես մարդ մը, որ կյանքի աշունը կապրի, քիչ մը եսասեր էր ու քիչ մը քինախնդիր: Շուտով ներել չէր գիտեր և ոչ ալ մոռնալ: Ու իր քենը զորավոր էր:

Շուտով հիսունը յոթը տարեկան պիտի ըլլար, այն վերջին տարին, աշնանը...

Աչքերուն մեջ կարոտ կար երջանկության, երբ մեռավ ու ձեռքերուն վրա՝ խաղաղության ծարավ: Մեռավ քներուն մեջ իր տղուն, որ այսօր կրսե թե վարի խավի մարդ մըն է, չորրորդ դասակարգի բրտությամբ ու կզգա, որ քիչ հետո, երբ փողոց դուրս գա ու հանդիպի իր հորը նման մարդու մը՝ կրնա առել զայն՝ ոխով մը, որ հետզհետե կմեծնա ու կամրանա:

Երբ մեռավ, դեմքին վրա քաղքենիի հպարտություն կար ու ձեռքերը, օ՜ գթություն, կնմանեին աղվոր ու կենսազուրկ բաներու, ցուրտ բաներու:

*8 փետրվար, 1930*

A Maria Péran[1]

Սալահատակին վրա բանվորներ կային ու քարերուն վրա դիմացի տուներուն լույսերը, որ կհիշեցնեին մեզ, թե ժամը ուշ է: Աղքատ ու ծեր կին մը մեզմե ողորմություն ուզեց: Հանկարծ անձրևի կաթիլներ ինկան մեր ձեռքերուն վրա, և մենք հիշեցինք, որ պետք է բաժնվիլ: Ես կնայեի իր աչքերուն, սպասելով, որ պայծառ լույս մը ցոլա, իսկ ան իմ ձեռ-

[1] *Մարիա Պերանին:*

քերուս, որ ջղայնությամբ կսեղմեին իր ցուրտ ձեռքերը: Շուն մը վազելեն անցավ մեր քովեն ու անձրևի կաթիլները սկսան առատանալ:

— Մինչև ստորերկրյա երկաթուղին՝ պիտի թրջվիս...

Ըսավ գորովով: Իսկ ես համբուրեցի իր ափը: Հետո լռեցինք:

Ձեռքերը երկարեց կրկին: Այդ վայրկյանին ես զգացի, թե այդ ձեռքերը պատրաստ էին անձնատվության, բայց անհրաժեշտ քաջությունը կպակսեր օգտվելու համար պատեհ առիթեն: Ես հիշեցի բազմաթիվ բաներ: Ու իմ հիշած բոլոր բաներս պատճառ կըլլային, որ ես ցանկամ զայն:

— Շատ մը բաներ կհիշեմ,— ըսի,— պզտիկ բաներ ու առաջին անգամ ըլլալով կցանկամ քեզ...

— Գիշերային շրջազգեստիդ վրա պզտիկ, կարմիր ծաղիկներ կան ու տերևներ...

— Սեղանիդ վրա տարօրինակ աչքերով տղու մը նկարը կա...

— Ձեռքերդ սպիտակ, ջերմ ու գեղեցիկ են, երբ տունը բազմոցիդ վրա երկնցած կըլլաս, բայց դուրսը անոնք կնմանին անապատեն թըռչուններու...

— Կհիշեմ շրթներուդ անգութ պրկումը, երբ ոևէ մեկը անհանգիստ կնե քեզ...

— Ծունկերուդ կափարիչները, երբ հագնիս մոխրագույն կարճ պարեգոտդ...

— Կուրծքիդ գունդերը, որ ափերուս մեջ կուզեմ այս գիշեր սեղմել...

— Կհիշեմ գեշ արտասանված բառերդ, որ սխալներեն կերկնչին...

— Կարմիր մանյակդ, որ ահա՛ երկու շաբաթե ի վեր չես դներ...

— Պզտիկ, հինցած նկարի մը վրա, չեմ գիտեր ո՛ր հեռավոր ծովափնյա քաղաքին ավազուտին վրա, մերկ մարմինդ, գինով ու վայրի՝ առտվան արևին մեջ...

— Բոլո՛ր խոսքերդ, որ արտասանեցիր մեր ծանոթության առաջին գիշերը...

— Արտասուքներուդ տաք կայլակները ձեռքիս վրա, երբ ես, դուն ու բարեկամդ գացած էինք թատրոն...

— Կհիշե՞ս, անգամ մը ըսիր, որ միայն զորավոր նկարագրով և գեղեցիկ տղոց պատկանած ես, մինչդեռ ես կխնդայի: Կհիշե՞ս, որ իմ խնդուքս վիրավորեց քեզ...

— Սեղանիդ վրա քույրիկիդ նկարը կա, աղվոր մանկուհի մը, եղնիկի մեծ աչքերով: Կհիշեմ իր անունը— Զլադա...

— Օր մը՝ շրթներուդ անգութ պրկումովը ըսիր ինծի. «Այսօր ի՞նչ

տգեղ ես ու բնավորությունդ ի՜նչ գեշ է այսօր, կզգամ, որ օր մը կրնամ սիրել քեզ...»:

— Կհիշեմ ձեռքերուդ ջերմությունը, երբ հիվանդ էիր ու ես այցելության եկա քեզի: Անընդհատ կուրծքդ կբացվեր ու ծիծերուդ սպիտակությունը կցայտեր դուրս: Մազերս քաշեցիր ու ձեռքերուդ մեջ շարշարեցիր: Կզգայի, որ կուզեիր, որ ծռեի վրադ ու փորձեի համբուրել քեզ, որպեսզի զիս բռնությամբ հրես անդին: Իմ հպարտությունս սակայն մեծ էր...

— Կհիշեմ խալի նատիկները, որ բազուկիդ վրա կան, օր մը թույլ տվիր, որ համբուրեմ զանոնք: Կհիշեմ՝

— Գիրքը, որ գնեցիր ինծի համար, գիտնալով, որ այդ օրը դրամ չունիմ...

— Քանի մը ծաղիկներ, որ տված ես ինծի, հանելով լամբակեդ...

— Այն տխուր հայրենական երգը, որ օր մը ինծի համար երգեցիր...

— Անուշահոտությունը, որ կգործածես ու գործածած բրնձափոշիիդ գույնը...

— Պզտիկ, աղքատ ճաշարան, ուր երեք անգամ ճաշած ենք միասին...

— Մեկ քանի ապօրեն համբույրները, որ բռնի առած եմ քեզմե, քու հեղակարծ մեկնումիդ օրը և տասնհինգ օրվան մեր քենը...

— Կհիշեմ այն բանվոր մարդը, որ օր մը ըսավ մեզի՝ զվարճացե՛ք, երիտասարդներ՝ երկու անգամ մարդ քսան տարեկան չըլլար...

— Կհիշեմ երջանկության կարելիություններ քեզի հետ և նաև այն՝ որ ես կպատկանիմ հեղափոխական կուսակցության մը և կուսակից եմ դասակարգային պայքարի...

— Ու այս հիշած բոլոր բաներս պատճառ կըլլան, որ քեզ ցանկամ այս գիշեր...

— Անձրևի կաթիլները ավելի խոշորցան ու քու աչքերուդ մեջ իմ ակնկալած լույսս չցոլաց, չցոլաց...

— Մինչև ստորերկրյա երկաթուղի պիտի թրջվիս,— ըսիր կրկին զորովով:

Իսկ ես ցած ձայնով հարեցի, թե՝

— Գիտե՞ս, պետք չէ վշտանաս ըսածներուս համար, ես տակավին տղա մըն եմ, ամիսներով կպահեմ գաղտնի բոլոր կարևոր բաները, որ ըսել կուզեմ ու օր մըն ալ, հեղակարծ կերպով, կըսեմ ամբողջը միասին...

— Գիտե՛մ,— ըսիր զորովով,— գեշ տղա մըն ես...

— Կզգամ, որ եթե այս գիշեր իմս չըլլաս, սիրույս ուժգնությունը

կիսով պիտի կորսվի ու ուրիշ անգամ երբեք այսքան խոնարհություն չպիտի ըլլա սրտիս մեջ, քեզ սիրելու համար...

— Եկո՛ւր,— ըսիր ձեռքես բռնելով,— գեշ տղա մըն ես, բայց ես կսիրեմ քեզ...

* * *

Ահա այսպես էր իմ տեսած երազս երեկ գիշեր: Առավոտը բացված էր, երբ արթնցա ու կզգայի, որ պատկերդ աչքերուս մեջ է ու ձեռքերուդ գգվանքը՝ ջերմե բռնված ձեռքերուս վրա: Երբ քեզի ըսի, թե քեզ տեսած էի երազիս մեջ, ժպտեցար ու ձեռքերս ափերուդ մեջ, ուզեցիր, որ պատմեմ: Իմ հպարտությունս, հեղակարծ կերպով վերադարձած էր սակայն ինծի ու կրկին գեշ ու քինախնդիր տղա մըն էի ես, պզտիկ սիրելի...

*14 փետրվար, 1930*

... Ու հետո, տարօրինակ արագությամբ, բազմաթիվ մարդոց և կիներու մերկ մարմիններ, իրարու կցվեցան խավարին մեջ:

Անձրևը առատացավ սալահատակին վրա ու շուն մը կաղկանձեց խավարը պատռելով: Ո՛չ ոք վստահ էր, թե առավոտը պիտի ծագի և ինք պիտի վերադառնա կյանքին: Ատոր համար ամեն մարդ կսպառեր իր սիրելու կարողությունը: Իսկ ես կմտածեի, թե ի՞նչ պիտի ընեն այս բոլոր անկարող մարդիկը, երբ վաղը սովորականին պես լույսը ծագի, ու ձմռան գորշ առավոտը բացվի քաղաքին վրա...

Ավելի հետո, կրկին տարօրինակ արագությամբ, քաղաքին բոլոր զանգակները սկսան հնչել, երկաթե և արույրե ձայներով: Ու բոլոր մանուկները, խեղանդամները և ծերերը, որ չէին կրնար իրար սիրելով զբաղված ըլլալ, սպիտակ հագած, կերթային հեռավոր ու անկարելի եկեղեցի մը, երգելով սիրո թափանցիկ ու պարագեաց տաղեր: Յուրաքանչյուրին ձեռքը աշտանակ մը կար, սպիտակ բոցի լեզվակով մը: Ու օդին մեջ, հակառակ խավարին, գարնան բուրումներ կային ձմռան գիշերով, ու նշենիի ծաղիկներ, աստղերու պես կծլեին: Մարդ մը սակայն, խոնջ ու այրված դեմքով ու ամբողջովին երկրային ու հանապազօրյա արտաքինով, կեցած էր լույսի կտուցին տակ: Ու բարձր ձայնով կխորհրդածեր: Եվ հակառակ գարնանային բուրումին, ձմռան գիշերով, նշենիի ծաղիկներուն ու մանուկներու տաղերուն և քաղաքին բոլոր զանգակներուն մետաղե ձայնին՝ ես ու դուն, կլսեինք, ի՛նչ որ ան կըսեր:

— Բոլո՛ր թռչունները պիտի վերադառնան իրենց բույներուն,— կըսեր,— գարնանադեմին բոլո՛ր ծառերը պիտի ծաղկին ու ցորենի ծաղիկներեն ավիշը խաղաղորեն պիտի բարձրանա: Բայց զիս չեն շահագրգռեր այդ բոլորը:

— Կարևորը հանգրվանը չէ, այլ ճամփան, կինը չէ, այլ անոր հարուցած ցանկությունը, բանաստեղծությունը չէ, այլ ներքին կրակը, որ կստեղծէ զայն ու նաև մթնոլորտը, որ կհածի, յուրաքանչյուր գեղարվեստական երկի շուրջ...

— Անգամ մը ես երազ մը տեսա, երկրի վրա ապրած ժամանակս, խավար էր ու լռության մեջէն կբարձրանար օտար եղանակ մը ու կտոր-կտոր կփշրվեր անկողնիս վրա: Հանկարծ իմ բազուկս, մատներուս ծայրերեն, սկսավ տարօրինակ արագությամբ աճիլ: Ու քանի պահը կառաջանար՝ թևս այնքան կերկարեր, երկյուղ ու ապշություն պատճառելով ինձ: Այդպես եք նաև դուք, ով անօրեն մարդիկ, որ երկրի վրա կապրիք: Ձեր բոլոր կարողությունները արտակարգ կերպով աճած են ու անտարակույս անկարելի համեմատություն մը կա ձեր բաղձանքներուն ու հնարավորություններուն միջև...

— Օր մըն ալ անձրև եկած էր, գյուղական ճամփու մը վրա, խոտերը թրջած էին, ու ամբողջ բուսականությունը ուրախությամբ կշնչեր: Կանաչ մողես մը կբարձրանար ծառե մը ու կծծեր, անձրևեն հետո ծագած արևին անուշ ջերմությունը: Խխունջներ կանցնեին քսվելով խոտերուն ու իրենց կպչուն հետքը ձգելով հողին վրա: Նորածիլ ծաղիկներու բուրում կար օդին մեջ, երբ հանկարծ սատանան քրքջաց ու խզեց լռությունը: Իր քրքիջը անգութ էր, դաժան ու երկարատև ու աղետի պես կիջներ տարածության վրա: Ես երիտասարդ էի սակայն ու դժպհի՝ մոտեցա իրեն ու հանդգնությամբ պահանջեցի, որ լռե: Քրքիջը խեղդվեցավ կոկորդին մեջ ու ձայնով մը, որ գաղտնի վազող ջուրի հունչի կնմաներ, ինծի ըսավ— Եկո՛ւր, եկո՛ւր, ի՞նչպես կըլլա, որ զիս չես ճանչնար, սիրելիդ իմ... Դողահար մոտեցա իրեն ու ան վար նետեց իր դիվական դիմակն ու դժոխային հագուստները:

Ապշած հոգիիս խորը, ես տեսա, որ սպիտակ աղջիկ մըն էր, որ ես սիրած էի, հեռավոր տարիներու ընթացքին ու անձնասպան եղած իրեն համար: Հագած էր բաց դեղին ու սարսռուն պարեգոտ մը, որ զիստերուն վրա կբացվեր, ցույց տալով քաղցր ու սպիտակ մորթ մը: Կուրծքերուն վրա այդ պարեգոտը թրջած էր եղյամեն ու փակած մարմնին: Մազերուն մեջ ծաղկի մնացորդներ կային ու աչքերուն մեջ հեռավոր ու կապույտ լույսի կտորներ:

— Ո՛վ որ հաջողի մոռնալ բոլոր գոյություն ունեցող բառերը, ես վստահ եմ, որ իր հուզումը արտահայտելու համար, պիտի կրնա ստեղծել ամենեն հուզիչ երգը: Բայց երկրի վրա, մարդիկ կապրին բառերու գերության մեջ...

— Բազմաթիվ ծիծեռնակներ վերադարձան իրենց բույներուն: Ու

կրկին ջուրերը սկսան երգել: Եվ ես հիշեցի, որ երկար տարիներ առաջ հայ եղած էի ու պատկանած Դաշնակցության: Հանկարծ Անի արքայանիստ քաղաքին՝ բոլոր եկեղեցիները արթնցան իրենց քունեն և ես տեսա Աշոտ-Երկաթ թագավորին պողպատե դեմքը: Քաղաքին ճամփաներուն վրա սաղավարտակիր զինվորներ՝ կհամբուրվեին աղջիկներու հետ, որ քսաներորդ դարուն, արևմտյան քաղաքներու մեջ, բանվորություն ըրած էին: Ու քահանա մը փողոցին մեջ կպատարագեր, մինչդեռ փողոցի բորոտ մուրիկներ, թաթերնին զարնելով իրենց զիստերուն ու մորուքնին քսելով հողին՝ կըսեին.

— Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, վա՜յ ինձ, զո՞րն ասեմ և զո՞րն խոստովանիմ, զի անթիվ են հանցանք իմ, աններելի են մեղք իմ և անքավելի են անօրենությունք իմ...

— Ու տարօրինակ էր, ամեն մարդ կսպասեր, որ Նազովրեցին գա, բայց ո՛չ տերունական լույս կար հեռուն և ո՛չ ալ ձիթենիի ճյուղեր շուրջը: Գինով հարն մը կպոռար քաղաքացիներուն, թե Նազովրեցին մտած է Մարիամ Մագթաղենացիի գիրկը ու երկրի կործանումեն առաջ, անկարելի բան է, որ սպառե իր սիրելու անսպառ կարողությունը...

— Ես խենթ չեմ,— կըսեր ամբողջովին երկրային ու հանապազորյա հագուստով մարդը:— Ձեռքերուս մի նայիք՝ քանի մը արյան կաթիլներ կան վրան: Քիչ առաջ վերք մը բացի զիստիս վրան ու ցայտող արյունը ափովս խմեցի: Ձեզմե ո՞վ կրնա նույն բանը ընել: Սեփական արյունը հին գինիե լավ է ու կպարգևե տանջված հոգիներուն անպարագիծ խաղաղություն մը:

— Ես չեմ այն՝ ինչ որ կկարծեք,— կըսեր մարդը,— ոչ ալ խենթ: Երկրի վրա ապրած ժամանակս՝ ես քաջ մարդ մըն էի ու կզբաղեի մարդոց հարստությունը չափելու գործով: Կսիրեի ծաղիկները ու ջուրերուն ձայնը, տխրության ժամերուս շարական կերգեի ու երբեք վատ բան մը չէի ըներ...

Հետո ես ու դուն երկնչեցանք մարդուն ձայնեն ու դեմքերնիս դարձուցինք անդին, բայց մարդը մեր աչքերուն մեջ էր: Ու ինձ թվեցավ, թե այդ մարդը ես եմ ու վախես մեծ ճիչ մը արձակեցի: Ու իմ ճիչս պատռեց լռությունը: Բոլո՛ր մերկ կիները դադրեցան լեսպյան հաճույքներով զբաղելե ու բոլոր մերկ տղաքը ետ վերադարձան սոդոմական ապականություններեն: Մանուկները լռեցին ու զանգակները խզվեցան իրենց արմատներեն ու ջախջախվեցան սալահատակին վրա:

— Հետո ի՞նչ պատահեցավ, սիրելի՛դ իմ,— ըսիր դուն քո շոյող ձայնովդ:

... Հետո, կրկին տարօրինակ արագությամբ, ամեն բան սրբվեցավ հիշատակես ու ես, չեմ գիտեր որ արևմտյան քաղաքին մեջ, մետաղագործարանի բանվոր եղա: Գավառական հետին ու մառախլապատ քաղաք մըն էր: Օրավարձերը գեշ էին, ու մենք հազիվ թե մեր ապրուստը կշահեինք: Երեկոները, ընկերներով կերթայինք մոտակա կապելա մը ու մինչև ուշ գիշեր կխմեինք, հայհոյելով դրամատիրական կարգերուն դեմ ու հիշելով, որ տունը մեր կիները և մանուկները կսպասեն: Շաբաթ երեկոները կերթայինք փողոցի ցույցի, շարժելով մեր կարմիր դրոշակները ու երգելով հեղափոխական երգեր: Ամեն օր կսպասեինք հեղափոխության ու ան քանի կուշանար, այնքան մեր զայրույթը կմեծնար կեղեքող դասակարգին դեմ ու նաև մեր կարոտը՝ կործանումներու և նո՛ր կարգերու...

Երբեմն, շրթունքիս գլանիկ մը ու երգի մնացորդ մը հիշատակիս խորը՝ ես կքալեի քաղաքին ճամփաներեն ու ինծ կթվեր, թե մենք երբեք չպիտի հաղթենք: Ու ատիկա մեծ ու անփարատելի տխրություն կպատճառեր ինծ...

— Իսկ ինչո՞ւ համար քեզի կթվեր, թե երբեք դուք հաղթական չպիտի ըլլաք, սիրելի՛դ իմ: Գեղեցիկ ու մեծ բան է հաղթությունը...

— Ահա՛ այդ էր կարևորը և սակայն այդ էր նաև, որ ես չէի գիտեր: Երբեմն կըսեի, որ մարդիկ կան, որ ծնած են հաղթելու համար, իսկ ուրիշներ պարտվելու, ինչպես որ մարդ գեղեցիկ կծնի և կամ թե տգեղ: Բայց այս խորհրդածությունը ավելի ապերջանիկ կըներ զիս: Ու ես չէի գիտեր, թե ի՞նչ պետք է ընել...

Հանկարծ սակայն, միշտ տարօրինակ արագությամբ, երազս փուլ եկավ իր պատերուն վրա ու ես ու դուն մնացինք դեմ դիմաց: Ու այդ բանը պատահեցավ իմ հայրենի տանս մեջ: Գարնան առավոտ էր կրկին ու իմ քույրս հորին քով, խոտին վրա, կխաղար նորածին ուլի մը հետ: Սարյակներ կերգեին ծառերուն վրա: Ու ես կմտածեի, որ այս բոլորը շատ տարօրինակ էր: Կմտածեի ու կըսեի. Մեր հայրենի տունը վաղուց է փուլ եկած իր պատերուն վրա: Ուրեմն ո՞ւր եմ ես հոս: Ասիկա իմ գրականությանս սովորական շրջանակն է: Մեր պարտեզը, ծաղիկներն ու թռչունները: Հետո հայրս իր դողդոջուն ձեռքերովը...

— Եվ հոդ, ի՞նչ կընեինք ես ու դուն, սիրելի՛դ իմ, այդ հեռավոր պարտեզին մեջ, գարնան մը ընթացքին, որ վաղուց գացած է իր վախճանին...

— Ես կսպասեի հեղափոխության ու դուն՝ սիրո: Եվ երկուքս ալ կտառապեինք ու կըսեինք.— Թափեցե՛ք ծաղիկներ մեր վրա, մեռելական ծաղիկներ...